15. Կան շաղկապներ որ ծամանակի գաղափար մը կը բացատրեն: Ինչ. երբ, յուրմէիկէտէ, մինչդեռ, եւն: Օրինակ՝

Վարժապետ կ'ուրախանայ — երբ լաւ սովորած լինիմ դասս:

16. Կան ուրիշ շաղկապներ որ կը բացատրեն բանի մը պատճառը կամ նպատակն, եւ կը ցուցնեն թէ իրենց կապած նախադառութիւններն համաձայն են իրարու հետ: Ինչ. քանզի, վասնզի, որպէսզի, եւն: Օրինակ՝

Պօլոս պիտի վարձարուի — վասնզի լաւ կ'աշխատի:

17. Ժամանակ, պատճառ, նպատակ ցուցնող շաղկապներուն տեղ՝ շատ անգամ՝ ատեն, ի վեր, պէս, համար, եւն: նախադառութիւնները կը դորժածուին՝ սառրադաս նախադառութեան բայն անդէմի փոխուելով: Օրինակ.

Փոխանակ բանիու

Երբոր տուն երամ, պիտի համբուրեմ հօրս ձեռքը:

Յակոր օրըստօրէ կ'ապակնի, վասնզի շար աղոց հետ կը պտըտի:

18. Կան ուրիշ տեսակ շաղկապներ որ համաձայնութիւն չեն ցուցներ, այլ հակաբանութիւն մը կը յայտնեն: Օրինակ.

Կը սիրեմ զքեղ — բայց կ'ատեմ քու թերութիւններդ:

Հարցմանեմ. — 14. Ստորագու նախադառութիւնք ինչո՞վ կը կապուին գլխաւորին հետ: — 15. — Ո՞ր շաղկապները կը յայտնեն ժամանակի գաղափար մը: — 16. Ո՞ր շաղկապները կը յայտնեն պարճակամ նպատակ: — 17. Ո՞ր շաղկապներուն տեղ ի՞նչ բաններ կընան գործածուիլ եւ ի՞նչ պայմանաւ: — 18. Ո՞ր շաղկապներն են որ հակաբանութիւն մը կը յայտնեն:

Կանայ բառի

Տուն գացած ատենս՝ պիտի համբուրեմ հօրս ձեռքը:

Յակոր՝ չար տղոց հետ պտըտելուն պատճառակ՝ օրըստ օրէ կ'ապակնի:

ԴԱՍ Դ.

Յաջողակ աօակերտին գիւտերը

Պ. Մամբրէ. — Մինչեւ ցարդ ցուցածներս դիւրին բաներ են, եւ դուք ամէնքդ ալ կրնաք ընել զանոնք . այնպէս չէ՞ . Բայց հիմայ պիտի զբաղինք ուրիշ տեսակ կրթութեամբ մը , եւ պիտի տեսնենք թէ ձեր մէջէն ո՞րն է ամենէն աւելի արթուն միտք ունեցրղը . Գրասախտակին վրայ կը գրեմ սախուքը . Լեւոն՝ որ արգիլուած և դասարանին մէջ , պատուհանէն կը նայի իւր ընկերներուն որք կը խաղան բակին մէջ .

Եթէ աւելցունէինք ածական մը կամ մակրայ մը , պիտի տեսնէինք թէ ո՞րչափ աւելի լաւ պիտի ըլլար այս խօսքն : Հսէ՛ տեսնեմ , Յովհաննէս , ի՞նչ կերպարանք ունի Լեւոն , երբոր արգիլուած տեղէն կը տեսնէ իւր խաղանդ ընկերներն :

Յովհ. — Տիուր է , պա՛րոն .

Պ. Մամբրէ. — Գրենք . տիսրագին կը նայի . Եւ հիմայ , ըսէ՛ նաեւ թէ խօսքն ինչո՞ւ համար աւելի լաւ կ'ըլլայ , եթէ գուարք ածականն աւելցունենք ընկերներ բառին վրայ :

Յովհ. — Ի հարկէ , պա՛րոն . ընկերներն ո՞րչափ աւելի զրօնուն՝ այնչափ աւելի կը տիսրի Լեւոն զանոնք դիտելով :

Պ. Մամբրէ. — Բաղզատենք երկու խօսքերն :

Հասարակ խօսք

Լեւոն՝ որ արգիլուած է դասարանին մէջ , պատուհանէն կը նայի իւր ընկերներուն որք կը խաղան բակին մէջ :

Յաջողակ աօակերտին խօսք

Լեւոն՝ որ արգիլուած է դասարանին մէջ , պատուհանէն տիրագին կը նայի իւր գուարք ընկերներուն որք կը խաղան բակին մէջ :

Այսպէս , յաջողակ աշակերտ մ'երբոր պարբերութիւն մը կը յօրինէ , պիտք եղած տեղը կրնայ աւելցունել ածական մը կամ մակրայ մը : Ուշիմ աշակերտն է որ կրնայ լաւա-

գոյն կերպով գանել այս բաներն : Ահա ասոնք են յաջողակ աշակերտին զիւտերն : Այս կերպով՝ խօսքը կը լինի աւելի բացայայտ, այնպէս որ՝ իրերն ու անձերը կը տեսնենք իրենց գոյնովն, իրենց գործերովն, իրենց կերպարանքովն, իրենց շարժումներովն : Առնո՛ւնք ուրիշ օրինակ մը :

Գիշեր մը, յանկարծ կը լսեմ ձայն մը՝ որ կ'արթնցունե զիս . անկողննես կը ցատկեմ, պատուհանը կը վագեմ, եւ կը նշմարեմ լոյս մը՝ որսէ կ'իմանամ թէ հրդեհ կայ : Պօղոս, կրնա՞ս ամբողջացունել այս խօսքը նոր գիւտերով :

Պօղոս . — Մրին գիշեր մը . . .

Պ. Մամբրէ . — Այդ բառն անօգուտ է : Պատմող մարդը կը քնանար եւ զիշերուան գոյնին ուշադրութիւն չէր կրնար ընել : Այդ բառը լաւ պիտի պատշաճէր, եթէ խօսէինք՝ օրինակի համար՝ տղու մը վրայ որ ճամբան կորուսած է մթին գիշեր մը . վասնզի այն ատեն այս բառով կը բացատրուէր տղուն սարսափն : Այս տեղ աւելի՛ կը յարմարի լոյն բառը լուսութեան մէջ աւելի աղէկ կը լսուի ձայն մը :

Պօղոս . — Յանկարծ կը լսեմ ձայն մը . . . յեղակարծ ձայն մը . . .

Պ. Մամբրէ . — Բայց քանի որ յանկարծ բառը կայ արդէն, աւելորդ է ըսել թէ յեղակարծ էր ձայնը : Մանսաւանդ մի՛ կարծեր թէ անպատճառ ածական մը պէտք է զնել ամէն դոյականի քով . կրնանք անփոփոխ պահել այս մասն : Անցնինք յաջորդ նախադասութեան . ըսէ՛ նայիմ, Յովիաննէս :

Յովի . — . . . Ձայն մը՝ որ զիս կ'արթնցունէ . . . ընդուս :

Պ. Մամբրէ . — Շա՛տ լաւ գտար : Դու ա՛ռ նայիմ, Պօղոս :

Պօղոս . — Պատուհանը կը վազեմ . . . գոց պատուհանը կը վազեմ :

Պ. Մամբրէ . — Աղէկ չէ այդ . շատ հաւանական է որ դու՛ ալ պատուհանը բաց չես ձգեր պառկած միջոցիդ : Այս տեղ եթէ կարեւորութիւն ունեցող բան մը կայ, ոչ թէ պատուհաննէ այն, այլ դու ի՞նքնդ, քո՞ւ ըրածդ, քո՞ւ զգացածդ:

Յովի . — Եթէ ըսէինք . պատուհանը կը վազեմ սարսափակար :

Պ. Մամբրէ, — Լաւ է, շարունակէ՛ :

Ցովին. — . . . Եւ կը նշմարեմ բոսրագոյն լոյս մը :

Պ. Մամբրէ. — Աղէ՛կ գտար. այդ գոյնը լաւ կը պատշաճի. ատով է որ կ'իմանանք թէ հրդեհ կայ : Բաղդատենք կ'իմայ մեր երկու պարրերութիւններն :

Հասարակ խօսք

Գիշեր մը, յանկարծ կը լը-
սեմ ձայն մը՝ որ կ'արթըն-
ցունէ զիս . անկողնէս կը
ցատկեմ. պատուհանը կը վա-
զեմ, եւ կը նշմարեմ լոյս մը՝
որմէ կ'իմանամ թէ հրդեհ
կայ :

Յաջողակ առակերգին խօսք

Լոյն գիշեր մը, յանկարծ
կը լսեմ ձայն մը՝ որ զիս
կ'արթնցունէ ընդուս : Ան-
կողնէս կը ցատկեմ, պա-
տուհանը կը վազեմ սարսա-
փահար, եւ կը նշմարեմ բո-
սորագոյն լոյս մը՝ որմէ կ'ի-
մանամ թէ հրդեհ կայ :

Հետեւեալ Հրանանգաց մէջ աևեցուցէ՛ք պատշաճ ածա-
կան մը կամ մակրայ մը :

Հ Ր Ա Հ Ա Ն Դ 46.

1. Երբոր . . . (ածկն.) քամին կը փէ՛ գուրսն, մ'ըշտի հաճելի է
լաւ . . . (ածկ.) սենեակն ուր կրակը կը ճարճառէ . . . (մակրայ) :
2. Երբ Պօզսս որթին վրայ կը աեսնէ . . . (երկու ածկ.) խաղաղ,
բերնին ջուրերը կը վազեն :
3. Անկողնէս ենելըւս պէս՝ պատուհանը կը բանամ և կը շնչեմ
առաւտեան . . . (երկու ածկ.) օդը :
4. . . . (ածկ.) երկաթագործը կայծեր կը ցայտեցունէ իւր . .
(ածկ.) մուգմին առկէն :
5. . . . (ածկ.) կատուն կը կծկոի կրակին մօս :
6. . . . (ածկ.) եկճեր կը նշմարուէն . . . (ածկ.) գետին յառակն :
7. Աբողյան՝ որ առառուն կանուխ գէղ սւզիղ կը բարձրանայ . .
երկնից մէջ և . . . (միք.) կ'երգէ, կարծե՞ գոհութիւն կը մոտուցանէ
. . . (ածկ.) որեւուն համար զըր Աստուծն կը շնչացունէ . . . (ածկ.)
թռչուններուն վրայ :

1. Լեւոն ծերուահին մատեցաւ . . . (մկր.) հանելով իւր գլխարկը :
 2. Փաթորիկը մօս է . արդէն փայլակները կը պատռեն . . . (ածկ.) ամպերն . հեռաւոր սրսումնն մը . . . (ածկ.) գուլումը կը լսուի :
 3. Երեկոյ է . . . (ածկ.) ձիերը վարուցանէն կը գերադառնան . . . (մկր.) :
 4. Մարիսամին նոյսէ . ան' ինչպէս այդ . . . (ածկ.) փոքրիկ աղջիկն իւր կիրակնօրեայ . . . (ածկ.) շրջազգեստն հագած՝ կը պարտի . . . (մկ.) :
 5. Հոյրիկ , Կուզէկ . . . (ածկ.) նամակ մը գրել քեզի , բայց . . . (ածկ.) խօսքեր չեմ կընար յօրինել . ուստի . . . (մկր.) կըսեմթէ շամ կը սիրեմ դքեզ :
 6. Փոքրիկ Ախոսկը գետին մէջ ինկաւ . ահա աներեւոյթ կըլսայ . . . (ածկ.) ջուրերուն տակ . բայց իւր մեծ եզրաւոը կը վաղէ , . . . (մկր.) կը սուզի ջուրին մէջ , կը բանէ զԱխոսկ որ նուազած է , և գետեզը կը հանէ . . . (ածկ.) աղան՝ բալորովին . . . (ածկ.) :
 7. Ասոտիկ հով մը կը ժէ . ճամբաւն . . . (ածկ.) փոշին կը բարձրանայ . . . (մկր.) :
-

ԿԱՆՈՆՆԵՐ

19. Պարբերութիւն մը գրելու ատեն , պէտք եղած տեղն աւելցունելու է պատշաճ ածական մը կամ մակրայ մը :
20. Ասոնցմով աւելի վայելուչ կը լինի խօսքն : Օրինակ . Սիրտերնիս կը դոդայ , երբոր կը տեսնենիք թէ ձկնորսին մակոյկն աներեւոյթ կը լինի ծովուն մէջ տեղն : Այս խօսքն այնշափ լաւ չէ՝ որչափ պիտի լինէր եթէ ըսէինք սապէս . Սիրտերնիս կը դոդայ , երբոր կը տեսնենիք թէ ձկնորսին փոքրիկ մակոյկն աներեւոյթ կը լինի լայնածաւալ ծովուն մէջ տեղն :


ՀԱՐԹՄՈՒՐԻ. — 19. Պարբերութիւն մը գրելու ատեն՝ ի՞նչ աւելցունելու է պէտք եղած ուղը . — 20. Խօսքն ի՞նչ կերպով աւելի գումարուչ կը լինէ :



ԴԱՍ Ե.

Արոռ.	Թիկնարոռ.	Բազկարոռ.
(չոր ու ցամաք խօսի)	(միջակ խօսի)	(կենդանի եւ շահագրգիռ խօսի)

Պ. Մամբրէ . — Պարբերութեան մէջ պատշաճ բաներ աւելցունելու մասին դեռ ունիմ քանի մ'ըսելիքներ՝ զորս լաւ հասկցունելու կրնայ նպաստել հետազայ ձեւերու բաղդատութիւնը :



Ձեւ 6.

Արոռ.

Ձեւ 7.

Թիկնարոռ.

Ձեւ 8.

Բազկարոռ.

Գործաւորին մէկը կը շինէ աթոռ մը . (ձեւ 6) : Նստելու համար բուն պէտք եղածն ալ ա'յս է ճիշդ :

Աւելի խոհական ուրիշ գործաւոր մը՝ աթոռին վրայ կ'աւելցունէ յենարան մը , Այն ատեն ո'չ միայն կ'ունենանք քրուն հարկաւորն , այլ եւ աթոռը կը լինի աւելի յարմար . Ասիկա թիկնարոռ (ձեւ 7) մ'է , ուր աւելի հանգիստ կը բնանք նստիլ կրթնելով :

Բայց աւելի ճարտար ուրիշ արհեստաւոր մը՝ յենարանին վրայ կ'աւելցունէ թեւեր . Նաեւ , բռւրդով կամ մազով կը լցունէ յենարանը , թեւերն ու նստարանն . Այն ատեն ո'չ միայն . կը լինի աւելի յարմար , այլ եւ շատ նահելի . Ասոր կ'ըսեն բազկարոռ (ձեւ 8) որ ամէնին գերազանց նստարանն է :

Պարբերութիւն մը յօրինող աշակերտները կը նմանին այս երեք գործաւորներուն : Կան որ ճիշդ հարկաւորը միայն կը դնեն : Ոմանք՝ աւելի յաջողակ լինելով՝ կրնան բան մ'ալ աւելցունել , այնպէս որ պարբերութիւնը լինի առելի լաւ եւ աւելի երկայն :

Պօղոս (ձեռքը վեր բարձրացունելով). — Պարբերութիւնն աւելի գեղեցիկ կը համարովի ուրեմն , երբոր երկայն լինի . այնպէս չէ , պարոն :

Պ. Մամբրէ . — Ա՛ն . զիրար հասկնա՞նք սակայն . եթէ խօսքն երկարէք այնպիսի բառերով որք բան մը չեն նշանակեր , երբէք աւելի գեղեցիկ չըլլար . ընդհակառակն :

Այլ , խօսք մը շաւագոյն կը լինի , եթէ զայն երկարէք՝ աւելցունելով միայն նոր գաղափարներ՝ որոնցմով աւելի շահագրգիռ եւ աւելի կենդանի լինի ձեր ըսելիքն . Օրինակ մը տամ . — Գրատախտակին առջեւ դնա՛ , Պօղոս , եւ զրէ խօսք մը՝ որոյ մէջ պիտի ըսես թէ Յակոբ՝ չարութիւն մը գործելէ յետոյ՝ կուգայ ներում խնդրել իւր հօրմէն :

Պօղոս (զրելով) . — Յակոբ իւր հօրը բով կուգայ եւ կ'ըսէ անոր . կը հաճի՞ս ներել ինձ :

Պ. Մամբրէ . — Լա՛ւ . բայց կարելի չէ բան մ'աւելցունել . զորօրինակ՝ ինչո՞ւ համար Յակոբ կուգայ իւր հօրը քով :

Յովին . — Անոր համար որ զղացած է :

Պ. Մամբրէ . — Ճշմարիտ է . ահա նոր գաղափար մը զոր պիտի աւելցունենք . բայց Յակոբ այդչափ բան միայն կ'ըսէ . կը հաճի՞ս ներել ինձ : Յուցնելու համար թէ այլ եւս չար տղայ մը չէ , փաղաքշական անունով մը չպիտի՝ կոչէ իւր հայրն , ինչպէս կ'ընեն շնորհալի տղայք :

Յովին . — Այո՛ , այո՛ , պարոն . պիտի ըսէ սապէս . Սիրելի՛ հայրիկս , կը հաճի՞ս , եւն :

Պ. Մամբրէ . — Մեր պարբերութիւնը սա ձեւն ստացաւ ուրեմն . Յակոբ՝ որ զղացած եր , իւր հօրը քով եկաւ եւ ըսաւ անոր . Սիրելի՛ հայրիկս , կը հաճի՞ս ներել ինձ :

Միտք բերէք քիչ մ'առաջ ըրած բաղդատութիւնս . ինձ այնպէս կը թուի թէ զեռ արոռի վրայ կը գտնուինք . ուր էր որ ջանայինք հասնիլ մինչեւ բազկարռու :

Երեւակայեցէ՞ք նայիմ, ի՞նչ կերպարանք ունի հիմայ
այս փոքրիկ տղան՝ որ պահ մ'առաջ կուլար եւ այնչափ
չար էր :

Պօղոս . — Հիմայ կը խնդայ :

Պ. Մամբրէ . — Բայց ո՛չ, Պօղոս, վասնզի տակաւին
ներում ընդունած չէ :

Յովին . — Ես կը մտածեմ թէ պէտք է որ դեռ քիչ մ'եւս
լայ :

Պ. Մամբրէ . — Իրաւունք ունիս, Յովհաննէս . Իթէ
դու ըլլայիր Յակոբին տեղն, ի՞նչ ձեւով պիտի մօտենայիր
հօրդ քով :

Յովին . — Ես, թեւերովս պիտի փարէի հօրս պարանոցին :

Պ. Մամբրէ . — Եւ ի՞նչ կերպով պիտի խօսի Յակոբ :

Յովին . — Ո՛հ, կրցածին չափ շնորհալի կերպով :

Պ. Մամբրէ . — Ուրեմն, այդ տուած պատասխաններովդ
ամբողջացուր պարբերութիւնն :

Յովին . (գրելով) . — Յակոբ՝ որ զղացած էր, արտասուա-
լից աչերով իւր հօրը քով եկաւ, և թեւերովը փարեցաւ
անոր պարանոցին, և «Ա՛հ, պարոն, ինծի կը
թուի թէ այսպէս լաւ չ'ըլլար . Երբ շատ եղան :

Պ. Մամբրէ . — Ստոյգ է . ուրեմն երկու մասի բաժնէ,
եթէ շատ երկար կը գտնես : Նորէն սկսէ :

Յովին . (գրելով) . — Յակոբ՝ որ զղացած էր, արտաս-
ուալից աչերով իւր հօրը քով եկաւ :

Պ. Մամբրէ . — Միջակէտ մը դի՛ր հոդ եւ շարունակէ :

Յովին . (գրելով) . — Թեւերովը փարեցաւ անոր պարա-
նոցին, եւ շնորհալի կերպով մ'ըսաւ անոր . «Սիրելի՛
հայրիկս, կը հաճի՛ս ներել ինձ :

Պ. Մամբրէ . — Յակոբ ուրիշ բան մ'ալ չ'ը՛սեր, ուրիշ
բան մ'ալ չ'ինդիր :

Յովին . (գրելով) . — Կը հաճի՛ս ներել ինձ եւ համբուրել
զիս :

Պ. Մամբրէ . — Շատ լաւ . հիմայ բաղդատենք այս
պարբերութիւնն առաջնոյն հետ :

Պարզ պարբերութիւն

Յակոր իւր հօրը քով ե-
կաւ եւ ըստ անոր . Կը հա-
ճի՞ս ներել ինձ :

Աւելի կենդանի պարբերութ .

Յակոր՝ որ գղացած էր ,
արտասուալից աչերով իւր
հօրը քով եկաւ . թեւերովը
փարեցաւ անոր պարանո-
ցին , եւ շնորհալի կերպով
մ'ըստ անոր . Սիրելի՛ հայ-
րիկս , կը հաճի՞ս ներել ինձ
եւ համբուրել զիս :

Հիմայ աղէկ կը հասկնաս , Պօղոս , թէ այս պարբերու-
թիւն՝ աւելի երկայն ըլլալուն համար չէ՞ որ լաւագոյն կը
համարուի , այլ անո՞ր համար որ կը ցուցնէ զարժուածքներն
ու կերպարանքը . Կարծես թէ մեր ականջով կը լսենք խօս-
քերն այն անձանց որոց վրայ կը խօսիս , այնպէս որ այս
անձինք կենդանի կը թուին . ահա ասո՞ր համար է որ կ'ըսեմ
թէ այս պարբերութիւնն աւելի կենդանի է : Այս խօսքը
կարդացողն՝ աւելի եւս կը շահագրգուռի այն անձանց նը-
կատմամբ որք կենդանի կը թուին . եւ այս պատճառաւ է որ
կ'ըսեմ թէ այս պարբերութիւնն աւելի շահագրգիռ է :

Ընդլայնումներ որոնցմով պարբերութիւնը կը լինի
աւելի կենդանի

ՀՐԱՀԱՆԳ 18.

Թէ ինչպէս ամկողին կը մտնէ խելօֆ տղան .

Յսկչաննէ՞ որ իւրչք կեցած է , կը մտնէ իւր անկողինը . (Զուա՞րթ
է թէ ախուր) — Մոյրն ի՞նչ կընէ : — Ի՞նչ կըսեն իրարու . — Յով
հաննէս անուշիկ քսան մը ողիսի քնանայ : (Ի՞նչ՞ւ համար :)

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 19.

Թէ ի՞նչպէս անկողին կը մտնէ յար տղան

Պետրոսը պատժելու համար՝ դրկեցին որ միայնակ երթայ պառկի : (Ի՞նչո՞ւ համար !) — Հազուտաները կը հանէ : (Ի՞նչ կերպարանք ունի !) — Անկողին մտնելէն ետքը՝ մայրը կու գայ կը վերցունէ ճրագը : Գեշեցի բարի , կըսէ Պետրոս՝ (Բ՞նչ կերպով !) — Մայրը կը պատասխանէ խստութեամբ . (Բ՞նչ կըսէ !) — Պետրոս չի կրնար քնանալ . (Ի՞նչո՞ւ համար !)

ԿԱՆՈՆՆԵՐ

21. Պարբերութիւն մ'երկայն ըլլալով չէ որ լաւ կը համարուի :

22. Պէտք է մանաւանդ զգուշանալ՝ պարբերութիւնն երկարելէ այնպիսի բառերով որք բան մը չեն նշանակեր :

23. Բայց լաւ կը լինի պարբերութիւնն , եթէ երկարենք զայն աւելցունելով ինչ ինչ նոր գաղափարներ որք աւելի կենդանի եւ աւելի դահագրգիռ . հանգամանք մը կուտան անոր :

Հարցմունք . — 21. Ի՞նչ կրնաք ըսել պարբերութեան մ'երկայնութեան մասին : — 22. Պարբերութիւն մ'ի՞նչ բանով երկարելէ պէտք է մանաւանդ զգուշանալ : — 23. Պարբերութիւն մ'ի՞նչ բանով կը լինի աւելի կենդանի և աւելի շահագրգիռ :

ԴԱՍ Զ.

Նամակ Խ. Շնօթաւորական

Պ. Մամբէք . — Քիչ մ'ալ նամակի վրայ խօսինք : Այս մասին ըսելիքներս հաւասարապէս կը վերաբերին նաեւ չնորհաւորականներու : Պօղոս ինձ ներկայեց ուրուագիրն այն նամակին զօր՝ ամանորի առթիւ : Կ'ուզէ դրկել իւր հօր որ

կը գտնուի ճամբորդութեան մէջ : Կարդա՞նք զայն ի միասին :

Սիրելի՛ հայրս ,

Այս պահուն՝ յորում լրացող տարին տեղի կուտայ նոր տարւոյ մը , հոգւոյս թելադրութենէն մղուած՝ կուգամ , ըստ նուիրական սովորութեան , քու ոտիցդ առջեւ դնել իմ մեծարանացս եւ բարեմաղթութեանցս հարկը : Թող երջանկութիւնը պսակէ՛ քու բոլոր ձեռնարկութիւններդ , եւ ամպ մ'երբէք թող շմթագնէ քու յաջողութիւնդ : Իմ փափագներս այն ատեն կ'իրանան , երբոր քու օրերդ սահին ուրախութեան մէջ : Զմեզ անջատող հեռաւորութեան չնայելով առ քեզ կ'ուղղեմ իմ երախտազիտութեանս արտայայտութիւնն այն անթիւ բարեաց համար զոր լիաբուռն թափեցիր գեռափթիթ տիոցս վրայ :

Ընդունէ՛ , ուրեմն , սիրելի՛ հայր , այս գեղեցիկ օրուան առթիւ , այն խանդակաթի իղձերն որով կը գեղանի սիրաս . եւ հաւատա՛ որ եռանդազին կը համբուեմ զքեզ :

Անձնուէր որդիդ՝

ՊՈՂՈՍ

Յ. Գ. Մոոցայ ըսել թէ մեր քեռին՝ Ղուկաս՝ մեղի այցելութեան եկաւ եւ սիրով բարեւեց զքեզ :

Պ. Մամբրէ . — Դիտաւորութիւնդ շատ լաւ է , սիրելի՛ դիմ Պօղոս . բայց նամակդ շատ գէշ է : Ըսէ՛ ինծի : Գրելէ՛ առաջ՝ նամականի մը թղթատած չե՞ս :

— Այո՛ , պա՛րոն , կ'ըսէ Պօղոս՝ քիչ մը՝ կարմրելով . մեր տան մէջ գտայ գիրք մ'օրոյ մէջ կը գտնուին պատրաստ նամակներ . արդ՝ գրքին զանազան տեղերէն քաղեցի ինչ որ լաւ երեւցաւ ինձ :

Պ. Մամբրէ . — Մեր բարեկամը՝ Պօղոս՝ բաւական նեղութիւն կրած է կարելի եղածին չափ գեղեցիկ խօսքեր գանելու համար . Բայց , երբոր մեր սիրելիներէն մէկուն կը գրենք , ամէնէն լաւ խօսքերն անո՞նք են որ ամէնէն աւելի հաճոյք կը պատճառեն անոնց : Արդ , կ'երեւակայեմ քու հայրդ յունվար և ի առաւտուն : Ճամբորդութեան մէջ կը

գանուի , միս մինակ , օտարներէ շրջապատեալ . Այն օրն՝ իւր տունէն եւ ընտանիքէն հեռու գտնուելուն համար՝ քիչ մը տխուր է անշուշտ : Նամակ մը կ'ընդունի , հասցէն կարդալով՝ կը ճանչէ քու զիրդ : «Ահ , կ'ըսէ , այս նամակն իմ Պաղոսիկէս է . արդեօք ի՞նչ կ'ընեն հոն , ի՞նչ վիճակի մէջ են» կը բանայ , կը կարդայ . բայց ի՞նչ . . . — թէ հին տարին տեղի կուտայ նոր տարւոյ մը . . . թէ իւր ոտից առջեւ կը դրուի հարկ մը . . . թէ իւր ձեռնարկութիւնի պիտի պսակուին . . . թէ ամպ մ'երբեք չպիտի մրագնե իւր յաջողութիւնն . . . Անկեղծութեամբ խօսէ , Պօ՛զոս . կը կարծե՞ս թէ հայրդ չպիտի փափագէր ուրիշ բաներ կարգալ քու նամակիդ մէջ :

Պօղոս . — Այո՛ , պա՛րոն , լաւ կը հասկնամ թէ այս նամակը գէշ է . բայց ի՞նչ պէտք էր զրել :

Պ. Մամբրէ . — Պէտք էր զրել ինչ որ հայրդ կ'սպասէ քեզմէ . մանրամանութիւններ ձեր տան վրայով՝ ուր շատ կը փափագէր գտնուիլ . մանրամանութիւններ ձեր ըրածներուն վրայով , ձեր ամէնուն վրայով զորս այնքան կը սիրէ եւ որոնցմէ բաժնուած է : Պէտք էր որ նամակդ կարդալու ատենը՝ կարենար կարծել թէ . կը գտնուի իւր տան մէջ , իւր փոքրիկ մանշուն քով՝ որ իրեն կը պատմէ ամէն ինչ որ պատահած է իւր մեկնելէն ի վեր :

Որովհետեւ յունվար 1 է , նախ եւ առաջ բարի տարի պիտի մաղթես պարզ կերպով , ճիշդ այնպէս՝ ինչպէս որ պիտի ընէիր կենդանի բարբառով : Յետոյ պիտի ըսես թէ ի՞նչպէս են տնեցիք , թէ ի՞նչ ըրիր այսինչ կիրակի , այսինչ հինգշարթի : Դպրոցին մէջ պատժուած ես թէ վարձատըրւած : Տան մէջ խելօք կեցած ես . ազգական մը , բարեկամ մ'այցելած չէ՝ ձեզի , եւն , եւն : Ի վերջոյ , պիտի ըսես թէ ո՛րքան երկար կ'երեւի քեզ իւր բացակայութիւնն , ո՛րչափ կը բաղձառ իւր վերադարձին : Բոլոր այս մանր պարագաներն՝ որ օտարի մը համար աննշան եւ ձանձրալի պիտի լինէին , այնպէս չպիտի համարուին քու հօրդ համար : Իսկ ես , եթէ ուրուագիրդ բերես , կրնամ սրբադրել անոր ինչ ինչ

յոտի մասերն . հայրդ ալ շատ գոհ պիտի լինի , ևթէ՝ նամակդ
կարդալու ատենն՝ զգայ թէ դո՛ւ իսկ , իւր փոյրիկ մանչն
ես որ կը խօսիս իւր հետ , ո՛չ թէ ուսուցիչը : Բայց չեմ
կրնար քեզի ցուցնել թէ ի՞նչ պէտք է գրես : Դո՛ւ միայն
կրնաս գտնել զայն , վասնզի դո՛ւ միայն գիտես այն ընտա-
նեկան ներքին բաներն որոնցմէ կ'ախորժի հայրդ :

Նաեւ , դիւրին միջոց մը կայ գտնելու թէ ի՞նչ պէտք է
գրել : Նամակն ուրիշ բան չէ՝ բայց եթէ գրաւոր խօսակցու-
թիւն մը : Երբոր սկսիս նամակդ գրել , երեւակայէ՛ թէ պի-
տի կրնաս քանի մը վայրկեան խօսակցիլ հօրդ հետ , թէեւ
հեռուն կը գտնուի նա . Եւ շատ պարզ կերպով գրէ՛ ճիշդ
այն բաները զորս բերնով պիտի ըսէիր , եթէ քովդ ըլլար .
Պատճառն ի՞նչ է որ քեզի այնչափ հաճելի է հօրդ նամակ-
ները կարդալ : — Պատճառը ոա է որ հայրդ քեզի կը պատ-
մէ իւր ըրածներն ու տեսածներն , եւ նամակն որքան ա-
ւելի մանրամասնութիւն պարունակէ՛ այնքան աւելի հա-
ճոյք կը պատճառէ քեզ . կարդալու ատենդ՝ քեզ այնպէս կ'ե-
րեւի թէ անոր քովն ես : Արդ , դու ալ ճիշդ ա'յնպէս գրէ՛
հօրդ՝ ինչպէս որ նա կը դրէ քեզի : Եւ մանաւանդ մի՛ աշ-
խատիր զեղեցիկ խօսքեր յերիւրելու : Շնորհաւորական ,
ինչպէս նաեւ ընտանեկան նամակներու համար՝ ձեւն այն-
չափ կարեւորութիւն չունի , այլ դիտաւորութիւնն է ամե-
նակարեւորն :

Հետեւեալ օրը , շատ մ'աշակերտներ իրենց շնորհաւո-
ւորական նամակաց ուրուագիրը բերին Պ. Մամրէի : Առոնց
մէջ երկու հատ կար լաւագոյն : Առաջինն Յովհաննէսինն
էր , երկրորդը՝ Մարկոս անուն տղու մը , որ շատ աղքատիկ
մօր մը միակ զաւակն էր՝ երկու ամսէ ի վեր որբ մնացած
իւր հօրմէն :

Յովիաննէսին օնորհաւորականը

Սիրելի՛ հայր իմ եւ սիրելի մայր՝

Չեմ ուզեր միմիայն ըսել թէ կը սիրեմ զձեզ ի բոլոր
սրաէ , այլ եւ կը փափազիմ պիրոյս ապացոյցը տալ . Թերու-

թիւն մ'ունիմ զոր լաւ կը ճանչեմ . եթէ տան մէջ փոքրիկ ծառայութիւն մ'ընել պէտք ըլլայ , կամ եթէ հրամայուի ինձ որ գործ մը կատարեմ , շատ անգամ կը ջանամ որ անհանդիսամ , եւ կամ կը ճնազանդիմ անչորհ կերպով մը :

Ասիկա գարշելի թերութիւն մ'է : Քանի որ դուք այնչափ աշխատանք կը կրէք ինձ համար եւ միշտ կը ջանաք որ երջանիկ լինիմ , ես ալ պարտաւոր էի իմ երախտագիտութիւնս յայտնել՝ ձեռքէս եկածին չափ օգնելով ձեզի եւ կրցածիս չափ երջանիկ ընելով զձեզ :

Նոր սկսող տարւոյս մէջ , կ'ուզեմ ձեր բոլոր հրամանները կատարել եւ ժրաջան տղայ մ'ըլլալ : Սիրելի՛ ծնողքս , ձեզ համար բարի զաւակ մ'ըլլալու յօժարութիւնս եւ անկեղծ բաղձանքս կը նուիրեմ ձեզ իբր կաղանդչէք .

Մարկոսին օմորհաւորականը

Սիրելի՛ մայրս ,

Լա՛ւ դիտեմ թէ այսօր աւելի տիտուր ես , վասնզի վերջացող տարւոյն մէջ հայրս մեր քովն էր դեռ , իսկ այս տարի ոչ եւս է : Ուստի եւ կրցածիս չափ պիտի ջանամ , սիրելի՛ մայրիկս , որպէսզի իմ պատճառաւոր վիշտ մը չունենաս բնաւ :

Ներէ՛ ինձ , եթէ յանդիմանութեան արժանի եղած եմ մերթ . հիմայ կ'ուզեմ բարի վարք մ'ունենալ . քանզի , եթէ այսուհետեւ խելօք չկենամ , առաւել քան երբէք գէշ բան մ'ըրած պիտի ըլլամ :

Հայրիկիս վերջին հիւանդութենէն ի վեր՝ լաւ կը տեսնեմ որ աղքատ ես , եւ թէ շատ կ'աշխատիս , որպէսզի ես բանէ մը զուրկ չմնամ : Կը խոստանամ քեզի , մայրիկ , թէ ես ալ աղէ՛կ պիտի աշխատիմ : Ամէն օր լաւ նիշեր պիտի բերեմ դալրոցէն : Եւ յետոյ , երբոր մեծնամ , միշտ քու քովդ պիտի կենամ , որպէսզի բոլորովին մինակ չմնաս , եւ բոլոր սրտովս պիտի աշխատիմ որ քեզի օգնեմ :

Ամանորի Նախընթաց օրը, Պողոս հետեւեալ ուրուազիրը
ըմբաւ Պ. Մամրէի որ փոխելու բան մը չգտաւ անոր մէջ:

Սիրելի՛ հայրիկս,

Նամակս թղթատունը կը ձգեմ, որպէսզի ճիշդ նոր տար-
ւոյ առաջին օրն հասնի ձեռքդ : Բարի տարի կը մաղթեմ եւ
բալոր սրտովս կը համբուրեմ զքեզ՝ մայրիկիս, պղոփկ եղարս
եւ իմ կողմէ :

Կը յուսանք թէ միշտ քաջառողջ ես : Հոս ալ ամէնքնիս
աղէկ ենք : Նախորդ շարթու մայրս հարբուխ ունեցաւ .
բայց պէտք չէ որ մտատանջութեան մէջ իյնաս . հիմայ աղէկ
է եւ ա՛լ չի հազար : Նախընթաց օր քեռփա՝ Պ. Դուկասը՝
մեզի այցելութեան եկաւ . իմացուց թէ քեռփիկինս քաջա-
ռողջ է, եւ պատուիրեց ինձ որ իւր բարեներն հաղորդեմ
քեզի :

Հոս շատ ցուրտ կ'ընէ . անցեալ հինգչարթի սաստիկ
սառեցան գետինները : Մայրս հրաման տուաւ որ երթամ
ընկերներուս հետ սահելու վարժութիւն ընեմ : Երկու ան-
գամ ինկայ եւ քիչ մ'ալ ցաւցուցի մարմինս . բայց նորէն
սկսայ, որովհետեւ դու միշտ կ'ըսես թէ տղայ մ'երկչոտ
պէտք չէ լինի . հիմայ կրնամ ինքզինքս բռնել եւ ուրիշնե-
րուն պէս սահիլ :

Անցեալ շաբաթ օր լաւ նիշ մ'առի վարժարանին մէջ .
բայց երկուշարթի մայրիկս յանդիմանեց զիս, փոքրիկ եղ-
քօրա՝ Պարէտին՝ հետ կոռւելուս համար : Կը խոստանամ որ
այլ եւս ասանկ բան չպիտի ընեմ : Պարէտը շատ սիրուն է .
ամէն օր կը հարցնէ թէ հայրիկս ո՞ւր է, ե՞րբ պիտի գայ ։
Ես ալ, սիրելի՛ հայրիկ, շատ կը փափազիմ քու վերադար-
ձիդ : Մայրիկս կ'ըսէ թէ ութ կամ տասն օրէն հոս պիտի
ըլլաս : Կ'աղաշեմ որ գալստեանդ օրն ու ժամն իմացունես,
որպէսզի առջեւդ գանք : Պիտի ջանամ. որ այս շարթու ալ
լաւ նիշեր ստանամ :

Շո՛ւտ եկուր, սիրելի՛ հայրիկս : Վաղը շարունակ զքեզ
պիտի յիշենք : Նորէն կը համբուրեմ զքեզ բոլոր սրտովս եւ

ուրիշ անգամներէ աւելի եռամդուն կերպով, վասնզի տարեգլուխ է :

Քու մանչդ որ շատ կը սիրէ զքեզ :
ՊՈՂՈՍ

ԿԱՆՈՆՆԵՐ

24. Ընտանեկան եւ շնորհաւորական նամակներու մէջ, պէտք չէ որ գեղեցիկ խօսքեր գրենք, ոչ ալ գործածենք այնպիսի բառեր զորս ջենք նասինար :

25. Պէտք է որ պարզապես գրենք այն բաները զորս բերանացի պիտի ըսէինք, եթէ իրարու մօտ գտնուէինք :

ՀԱՐՑՄՈՒՆՅԹ. — 24. Նամակներու մէջ բնշ բանէ զգուշանալ պէտք է, — 25. Ի՞նչպէս պէտք է գրել բացակայ անձանց :

Վ. Ե Ր Զ

Պ. ՄԱՄԲՐԵՒ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆՑ



ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՀՐԱԶԱՆԳՆԵՐ [1]

ՅԱԴՐՈՒ

Ա.

ԿԱՑՈՒԻՌ ՆԿԱՐԱԳԻՐԸ



Կատուս ողիստոկ է կատուս կը քսուի կատուս քնանաւ և ուր բիծեր ունի սրունքներուս : լու երկային ունի վրան :

Նախագիծ, — 1. Կատուս . . . (գոյնն, աչքե՞րն, ականջներն) : — 2. Կատուս որկրամոլ է. ճաշած ատենս կուգայ կը սլքտայ (ո՞ւր) : — 3. Սրունքներուս կը քսուի (ինչո՞ւ համար) : — 4. Այն ատեն (ի՞նչ ձեւ, ի՞նչպիսի կեցուածք ունի) : — 5. Կատուս մակոտ է . կը սիրէ կծկտիլ (ո՞ւր). այն ատեն ի՞նչ զիրք ունի. ի՞նչպէս կը դնէ իւր թաթերն : — 6. Այն ատեն աչքերը բա՞ց են բոլորովին :

[1] Այն նախապատրաստական հըահանգները նախ բերանացի պէտք է պատրաստակն և ողու դրէ առնուին.

Բ. — ԿԱՂԱՄԱՐԸ

Նախազիծ. — 1. Մարկոս կաղամար (ի՞նչ նիւթէ) մ'ստացաւ վարժարանին մէջ (սիրո՞ւն է այս կաղամարն . ի՞նչ նիւթէ շինուած է խուփը): — 2. Վարժարանէն դուրս ելած ատեն , փոխանակ (ի՞նչ ընելու) կը փութայ (ի՞նչ ընել) , որպէս զի ժամ առաջ (ի՞նչ ընէ):



Բիւթեղեայ կաղամարն
որ ունի մետաղեայ
խուփ մէ:

ՀՐԱՀԱՆԴ 20.

Հետեւեալ նախադասութիւններն ամբողջացուցէք :

1. Զինուորը . . . (երկու բայ) եւր հայենէիքը :
2. Երակին մէջ՝ երկաթը . . . (երկու բայ) :
3. Լուսացարարը . . . (երկու բայ) ճերմակեղէնները :
4. Նաղաստակ՝ զղցիկ ձայն մը լուելուն պէս՝ ականջը... (երկու բայ):
5. Երկրագործը . . . (երկու բայ) :

Գ. — ՈԱՀՆԱԿ



Ուուրէն առաջ կը Ուուրէն կեյնայի Ուուրէն մէջքը
նետուի համարձակ:

Նախազիծ. — 1. Ուուրէն շատ լաւ գիտէ սահիլ . առաջ կը նետուի . . . (մկր.) : — 2. Նայեցէք. (ի՞նչ դիրք ունին աջ

ոտքը, ձախս ոտքը, թեւերը) . — 3. Մերթ կ'իյնայ, եւ փոխանակ ոտքով սահելու՝ կռնակին վրայ կը սահի (այն առեն ի՞նչ դիրքի մէջ են իւր սրունքները) . — 4. Բայց . . . (ստորոգելի) չէ . ոտքի կ'ենէ (ուրիշ ի՞նչ կ'ընէ) եւ նորէն կ'ակսի (մակրայ) .



Հ Ր Ա Հ Ա Ն Գ 21.

Հետեւեալ նախադասութիւններն ամբողջացուցէք :

1. Որորդը կ'ունենայ . . . (երեք ինդիր) .
2. Զգուշացի՛ր որ մելանով չարատաւորեն . . . (չորս ինդիր) .
3. Մուրը՝ կարկանդակ շինելու համար կը դործածէ . . . (հինգ ինդիր) .

Դ. — ՓՈՒՅԻԿ ԱՆԴՐԵԱՍԻ ԳԼԽԱՐԿԸ



Մէջրան օդին մէջ կը թարեսիրու լւսն Անդրէաս գետնէն նետէ Անդրէասի ծառն ի վեր կը կ'առնու իր գըլ-դիմուկը .

Նախազիծ . — 1. Կռուասէր Միհրանն օդին մէջ կը նետէ փոքրիկ Անդրէասի դիմարկն՝ որ կ'երթայ կը կառչի (ուր) : — 2. Անդրէաս մնծ ցաւ կ'զգայ (ինչո՞ւ համար). 1^o Կրնա՞ր անձամբ առնուլ զայն : 2^o Իւր ծնողքն ի՞նչ պիտի ըսէին

իրեն, եթէ . . . — 3. Բայց լեւոն՝ որ . . . (ստորոգելի) է, մագլցեցաւ ծառն ի վեր. (նկարագրեցէք մագլցող տղան. նեղութիւն կը կրէ). հասաւ դլխարկին մօտ. Անդրէասին նետեց զայն (ի՞նչ ըստ անոր). — 4. Անդրէաս . . . (ի՞նչ կ'ընէ, լեւոնին ի՞նչ կ'ըսէ) եւ միտքը կը դնէ որ այլ եւս շաղայ . . . հետ.

Ե. — ՄՈԿՈՑ ԵՐՈՒԱՆԴԱԸ

Նախազիծ. — 1. Այս գիշեր ձիւն տեղաց. փողոցները . . . են . . . (ածկ.) հով մը . . . Տեսէք,
մակոտ Երուանդը կ'անցնի. ծերուկի մը
պէս կորաքամակ կը քալէ. — 2. Թիթը
. . . (ստորոգելի) է. Զեռքերն ո՞ւր
զրած է. մինչեւ ո՞ւր կը հասնի իւր
խոշոր փողպատն. — 3. Եւ սակայն կը
սարսույ (ի՞նչո՞ւ համար).



Երուանդ կը սարսույ-
թայ, վասնդի բա-
տական շարժում
չ'ըներ:


ՀՐԱՀԱՆԳ 22.

Ուսումն բառից. — Գոյականներ գտնել.

1. Հօրու ույրն իմ . . . է. Քրոջը ամուսինն իմ . . . է. Մօրու հոյրն
իմ . . . է. Հօրու մոյրն իմ . . . է.
2. Տաճէ ծառին . . . վայրէ գորդը կը բաւոնի . . . վրայ.
կերոսէ ծառը կը կոչուի . . .
3. Մօրուքը լուծիլն . . . ով.
4. . . . Կըսէն ոյն տեղին ուզ ուստելիքներ կը դահուկն թարմ
մնալու համար.

Զ. - ՀՐԱՆՏԸ ՄՍԿՈՑ ՁԵ

Նախազիծ. — 1. Նկարագրեցէք Հրանտն՝ բսելով թէ
չի վախնար ձիւնը շօշափելէ, կը
վազէ, շարժումներ կ'ընէ, եւն .
. . . , եւ չի մակր :



Հրանտ ձիւնէ դնուակներ
կը նետէ :

տեղը պարապ կը թողու (ինչո՞ւ համար) : — 3. Սեղանին
ները կը շարէ շուրջանակի . բայց զանոնք զետեղելէ առաջ՝

Է. — ՍԵՂԱՆԻ ՍՊԱՄՆԵՐԸ

Նախազիծ. — 1. Փոքրիկն Մարիամ
սեղանին սպասները կը շակէ .
սփռոցը կը տարածէ՝ հոգ տանե-
լով որ . . . : — 2. Սեղանին մէջ



Մարիամ սկսւաւ Մարիամ կը բերէ «Մայրիկ, աւ՞սթէ
ուկները կը շարէ» . հացն ու շիշերը . լաւ շտկուածն է» .

կը նայի որ . . . : — 4. Մէն մի սկսւառակի քով կը դնէ .
. . . : — 5. Գաւաթներն ալ կը շարէ . բայց նախապէս . . .
— 6. Յետոյ կ'երթայ կը բերէ (ի՞նչ) : — 7. Այն ատեն կը
կանչէ մայրն եւ կ'ըսէ անոր . Մայրիկ, եկո՛ւր տես թէ . . .

ՀՐԱՀԱՆԳ 23.

Ուսումն բառից . — Ածականներ գտնել :

1. Զանազան յաջողութեան կը տեն յաջողութիւն :
 2. . . . է այն ծովագնացութիւն որպէս մէջ լուսնիւր կան :
 3. . . . է այն դեղն որ սպասուած ողբերանիւն կը տեն :
 4. . . . է այն մարդը զոր հարելի շե ուստեւ և է ողաշանագ :
 5. Ով ոք վերահաս վառնդը չե աւստեւե՝ կը կոչուի . . .
-

Ը. — ՅԱԿՈՒԹԻՆ ԹՌՈՒՑԻԿԸ

Նախագիծ . — 1. Յակոր աղուոր թռուցիկ մ'ումի (ուսկ' գնած է) : — 2. Իւր ընկերներուն ցոյց կուտայ զայն (բան մ'աւելցուցէք) : — 3. Տեսէք, կըսէ . . . (ի՞նչ կ'ըսէ հպարտը . թռուցիկին գեղեցկութիւնը կը ցուցնէ, գնոյն վրայ աեղեկութիւնը կուտայ, եւ յետոյ կ'ըսէ թէ ուրիշները չունին այնչափ աղուոր թռուցիկ մը) : — 4. Յակոր կ'արձակէ Յակոր իւր թռուցիկը իւր թռուցիկը . բայց չի թողուր որ ուսց կուտայ հպարշատիւնը . — 5. Զ'արժեր թռուցիկ ունենալ, եթէ . . .



Թ. — ՍԻՍԱԿԻՆ ԹՌՈՒՑԻԿԸ

Նախագիծ . — 1. Սիսակ ինքնին շինեց թռուցիկ մը՝ (ինչո՞վ) : — 2. Զի վախնար թէ սփափ վնասուի (ինչո՞ւ հա-

մար) : — 3. Ահա օդին մէջ է թռուցիկն . այնչափ վեր
բարձրացած է որ — 4. Սիսակ
խւր թռուցիկը նախամեծար կը համարի
քան



Ախակին թռուցիկն այնչափ բարձրացած է որ հազիւ կը նշանաւի .
Նախագիծ . — 1. Յակոր ու Սաթի-
նիկ աղքատ են , եւ վաղը մայրի-
կին տօնախմբութիւնն է : Ա՛հ , եթէ
քիչ մ'ստակ ունենային (ի՞նչ պիտի
ընէին) : — 2. Սաթինիկ լաւ խոր-
հուրդ մը յղացաւ . հետեւեալ օրն ի-
րենց անկողնէն ելան (ո՞ր ժամանակ) եւ դաշտերը գնացին .
հաւաքեցին . . . (զուք լնքնին կազմնցէք փունջը . ծաղ-
կանց անուններն ու գոյներն ըսէք) : — 3. Երկու հատ աղ-

Ժ. — ՄԱՅԻՆԿԻՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆԸ

Նախագիծ . — 1. Յակոր ու Սաթի-
նիկ աղքատ են , եւ վաղը մայրի-
կին տօնախմբութիւնն է : Ա՛հ , եթէ
քիչ մ'ստակ ունենային (ի՞նչ պիտի
ընէին) : — 2. Սաթինիկ լաւ խոր-
հուրդ մը յղացաւ . հետեւեալ օրն ի-
րենց անկողնէն ելան (ո՞ր ժամանակ) եւ դաշտերը գնացին .
հաւաքեցին . . . (զուք լնքնին կազմնցէք փունջը . ծաղ-
կանց անուններն ու գոյներն ըսէք) : — 3. Երկու հատ աղ-



Յակոր և Սաթինիկ
ծաղիկներ կը հա-
սպեն :

Վառարանին
կը դնեն իրենց
փունջերը :

Մոյրը
կը զարմանայ և
գոհ կը մնայ :

ուոր փունջ շինեցին . յետոյ , (ո՞ր միջոցին) . . . (ի՞նչ բանի
վրայ) դրին զանոնք՝ երկու ամանի մէջ : — 4. Երբոր մայրը
ներս մտաւ , յանկարծ տեսնելով ծաղիկները՝ (ի՞նչ զգացում-
ներ ունեցաւ) : — 5. Կերակուրի ատեն՝ փունջերը սեղանին
վրայ դրաւ . ճաշն համեստ էր՝ բայց . . .

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 24.

Հետեւեալ պարբերութիւններն ամբողջացուցէք :

1. . . . (շղկո) մայրը բացակայ գտնուի, փոքրիկն Մարիամ անական դորձերը կը հոգայ :
 2. Քննութեան արդիւնքն իւսուսուս ոկո (շաղկապով բացատրեցէք)՝ հեռագրով պիտի հազրողեմ քերի :
 3. . . . (շղկ) երկաթուղիներն հաստատուած են, ճամբորդութիւնը շատ դիւրացած է : — (Այս սահրադաս նախադասութիւնը՝ նախադրութեամբ բացատրեցէք.)
 4. Պետրոսի առաջնութիւնն աւելի և բարւքած է (շղկ) մարմամարզութիւն կը լի : — (Նախադրութեամբ բացատրեցէք.)
-

ԺԱ. — ՍԱԼՈՒԻ ԿԱՐԿԱՆԴԱԿԸ

Նախագիծ. — 1. Յովհաննէս խոհանոցին մէջ կը տեսնէս սալորէ կարկանդակ մը՝ ճաշի համար պահուած : — 2. Կը նայի որ (ի՞նչ կը տեսնէ . ցուցէ՞ք թէ որչափ ախորժաբեր է տեսածը) : — 3. Խոհանոցին մէջ մէկը կա՞յ) : — 4. Յովհաննէս սալոր մը կ'առնու կը կընէ . բայց կարկանդակին մէջ ծակ մը կը գոյանայ : — 5. Յովհաննէս մտատանջութեան մէջ կ'իյնայ (ի՞նչո՞ւ համար) . երեկոյին ի՞նչ պիտի ըսեն իրեն՝ երրոր տեսնեն այս բանը :

ԺԲ. — ԿԱՏՈՒԻ Ե ԿԵՐԵԲ

Նախագիծ. — 1. Սեղան նստած են . կարկանդակը կը բերուի : Հայրը դանակ մը. կ'առնու (ի՞նչ ընելու համար) : — 2. Յովհաննէս տագնապի մէջ է (ի՞նչ կը մտածէ) : — 3. . . . պահուն՝ յանկարծ հայրը կը կենայ . . . (ի՞նչ կ'ըսէ, ի՞նչ կը հարցնէ) : — 4. Յովհաննէսին կը նայի : Փոքրիկ որկրամոլը (ի՞նչ կերպարանք ունի) կը պատասխանէ . կատուն է կերեր անշուշտ : — 5. Գնա՛ հոս բեր կատուն, կ'ըսէ հայրն (ի՞նչպիսի ձայնով), որպէսզի . . . : — 6. Այն ատեն Յով-

հաննէս (ի՞նչպիսի ձեւով) իւր յանցանքը խոստովանեցաւ՝
ըսելով . Հայրիկ, մի՛ պատմեր կատուն . . . ես եմ : — 7.
Սալորն ուսելը շատ գեշ բան էր , բայց . . . գովելի էր :


ՀՐԱՀԱՆԳ 25.

Հետեւեալ նախադասութիւններն ամբողջացուցէք :

1. Պօղոս ծաղիկներ կը հաւաքէ . . . (մւր, ի՞նչ ընկլու համար) .
 2. Որմադերը շոշով կը շինէ . . . (ի՞նչո՞վ, ի՞նչ ընկլու համար) .
 3. Որորդն՝ . . . (ի՞նչո՞վ զինուած է)՝ դաշտուրը կը դուբաի (որո՞ւ հետ , ի՞նչ ընկլու համար) .
 4. Կոյծութիները կը ժայլին . . . (ե՞րբ, ո՞ւր) .
 5. Փարսոներ կը վառեն (ե՞րբ, ո՞ւր, ի՞նչ ընկլու համար) .
-

ԺԳ. — ԺԱՄԱՅՈՅՑԸ

Նախագիծ . — 1. Ժամացոյց մը տուին Գրիգորին եւ պատուիրեցին որ չբանայ : — 2. Գրիգոր՝ որ



• . . . (որո՞նք են այն երկու թերութիւններն որք ժամացոյցը բանալու պիտի մղեն զնա) տղայ մ'է , ժամացոյցը կը բանայ . . . (ո՞ր պահուն) , եւ կը նշմարէ (ի՞նչ) : — 3. Կ'սկսի անոր հետ խաղալ (ի՞նչո՞վ) : Ժամացոյցը կը կենայ (Գրիգորինչու կը նշմարէ զայս) : — 4. Գրիգոր շատ ցաւ զգաց , քանզի . . . (երկու որիշոր ժամացոյցը կը բանայ՝ — 2 ան պատճառ կայ) :

ձին գտնուած պահուն :

ՀՐԱՀԱՆԳ 26.

Ուսումն բառից . — Գոյականներ գտնել :

1. Կառքերը կը զետեղն . . . մէջ .
2. Ցորենը կը ծեծեն . . . մէջ .

3. Անկողինակը կը զետեղե՞ն . . . մէջ .
4. Գրքերը կը շարեն . . . մէջ :
5. Ստոկը կը պահեն . . . կամ . . . մէջ .
6. Սեղանի անօթները կը դնեն . . . մէջ .
7. Ճամբորդներն իրենց զգեստները կը դնեն . . . մը մէջ .

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 27.

Հետեւեալ պարբերութիւններն ամբողջացուցէք :

1. Մայրը կը կարկատէ զգեստներն, . . . (քաէ՛ք ստորագաս նախադասութիւն մը որդեղի շաղկապով) :
2. Պարտիզանն արեւէն կը զահզանէ իւր ծաղիկներն, . . . (սորդ. նիդ. որդեղի ովավ) :
3. Փականքները կիրառեն . . . (սո. նիդ. որդեղի ովավ) :
4. Փոթորկի առեն ծառի տակ մի՛ կենար, . . . (սորդ. նիդ. որդեղի ովավ) կայծակնահար չըլլաս :
5. Արաւոտուն՝ սննդին պատրւհանները կը բանամ, . . . (սորդ. նիդ. որդեղի ովավ) :



ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՐ

Ժ. Գ. — ՍԱՐԵԱԿՆ ՈՒ ԿԱՅԾՈՌԻԿՆ (Առակ)

Նախագիծ. — 1. Կայծոռիկ մը կը փայլի խոտերուն մէջ. ինքինքն աստղերուն հետ կը բաղդատէ (կայծոռիկն ի՞նք թող խօսի գոռողութեամբ) : — 2. Սարեակ մը կը նշմարէ զայն (ի՞նչ կը խօսի), եւ կը լափէ : — 3. Բարոյական :

Ժ. Ե. — ՍԱ. ՓՈՐԸ

Նախագիծ. — 1. Արակոնի (1) Ալֆոնս անուն բարի թագաւորը՝ շատ մ'իշխաններու ընկերակցութեամբ՝ ակնավա-

(1) Աղանդոյ՝ գաւառներէն մին՝ որ ատենով անկախ թագաւորութիւն մը կը կազմէր :

ճառի մը խանութը գնացած էր՝ գոհարեղիններ գնելու համար։ Դուրս ենելու միջոցին՝ վաճառականը ցած ձայնով ըստ անոր թէ իշխաններէն մէկը մատանի մը գողցաւ (վաճառականն ի՞նք թող խօսի), Բազաւորը նորէն ներս կը մըտնէ։ — 2. Կը հրամայէ որ բարակ աւազով լցուն սափոր մը դնեն սեղանին վրայ (թագաւորն ի՞նք թող խօսի)։ — 3. Բազաւորը կը հրաւիրէ իշխաններն որ աւազին մէջ խոթեն իրենց ձեռքը (թագաւորն ի՞նք թող խօսի։ Նաեւ ըսէ՞ք թէ ի՞նչու համար այս միջոցն ի գործ դրաւ)։ — 4. Մատանին գանուեցաւ։ — 5. Բարոյական։

ԺՅ. — ԳՈՎԵԼԻ ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Նախագիծ։ — 1. Կոյր ծերունի մ' եւ իւր թոռը կը մուրան (նկարագրեցէ՞ք անոնց տիսուր կացութիւնն)։ — 2. Օր մը կը նստին կերակուր ուտելու (կոյրն ի՞նք թող խօսի)։ Կտորիկ մը հաց միայն ունէին։ Տղան մեծ հօրը կուտայ զայն։ (Տրամախօսութիւն)։ — 3. Տղուն այս բարի վարմունքին վրայ խորհրդածութիւն։

ՀՐԱՀԱՆԳ 28.

Ուսումն բառից։ — Գոյականներ գտնել։

- Արջառներն իրենց կերը կ'ուտեն . . . մէջէն։
- Սուրճը կը պարասասուկ . . . մէջ։
- Այն շենքն ուր կը բնակին զբարեւ . . . կը կոչուկ։
- Այն պաշտօնասաւնն ուր դատաւորք ուր կը տեսնեն կը կոչուկ։
- Այն եղանակ որ էլ դրելու կը դործածուկ։ կը կոչուկ . . .
- Այն ուզրկին որոյ անիւները լէ ուժով կը դա նաև կը կոչուկ . . .
- Այն շենքն ուր տղարանքներ կը դրուին է լուսու՝ կը կոչուկ . . .
- Այն դործին որով ուր կը գծենք՝ կը կոչուկ . . .

**ԺԷ. — ՊԵՏՔ ԶԵ ԽՈՀԱՐԱՐ ԿԱՐՆԵԼ ՖՐԱՆՍԱՅԻ
ՄԱՐԱԶԱԿԻՑ ՄԸ**

Նախագիծ . — 1. Թէ ո՞վ էր Պ. Թիւրէն (1). — 2. Առաջու մը մարաջախտն՝ իւր դղեակի մէկ պատուհանէն վար ծոռած՝ թարմ օդ կը ծծէր (Նկարագրեցէք իր հագուստն. ըսէք թէ ինչո՞ւ համար չէր ճանչուեր), — 3. Դեռատի ըսպասաւոր մ'ետեւէն ուժգին հարուած մը կ'իջեցունէ անոր. (Տեսարանը նկարագրեցէք) — 4. Մարաջախտն ետին կը դառնայ. սպասաւորն՝ որ կը կարծէր թէ խոհարարին հետ է իւր դործը, կը սոսկ կայ. Մարաջախտին մեղմ պատասխանը.



Դեռատի սպասաւորը ձեռքը կը վեցուէն՝ հընդուն հարուած մը սաւ լու համար:

ԺՔ. — ԶՈՒԹԱԿՆ ՈՒ ԱՂԵՂԸ

Նախագիծ . — 1. Զութակահար մը՝ նուազահանդէսի մը մէջ . ծափահարութիւնք : — 2. Աղեղն ու ջութակը կը վիճին իրենց փոխադարձ արժանեաց վրայ. (Տաք տրամախօսութիւն մը) — 3. Աղեղն ու ջութակն իրենց տուփին մէջ դրուելով՝ կը լռեն : — 4. Բարոյական :

ԺԹ. — ԵՐԵՔ ՄԵՇ ԲԺԻՇԿՆԵՐ

Նախագիծ . — 1. Մեծ բժիշկ մը մահամերձ է . ուրիշ բժիշկներ զայն կը դարմանեն . (Նկարագրեցէք աեսարանը.) Մահամերձը կ'ըսէ թէ իրմէ ետքն երեք մնծ բժիշկներ կը թողու (մահամերձն ինք թող խօսի) : — 2. Բժիշկները մի առ մի կ'ստիպեն զնա որ բացատրէ այս խօսքն (ինչո՞ւ համար) : — 3. Մահամերձը կը յայտնէ երեք անուններ (ի՞նչ են անոնք) :

(1) Լուկ ՃԴ.ի գործած առևնէն մեծ զօրավարներէն մին (1611—75).

Մամօր. — Մարդու առաջնութիւնը կը պահպանուի մաքրութեամբ, շփուրութեամբ եւ մարմամարզով:

Հ Ր Ա Հ Ա Ն Դ 29.

Հետեւեալ խորերն ամբողջացուցէք :

1. Պետրոս' . . . (մ'ւր գրուած են հասկերը) հասկերը . . . (ինչո՞ւ) կը ծեծէ, . . . (ինչո՞ւ համար) :
 2. Բարի հոյը մը . . . (Ք'նչղէս) կ'աշխատի' . . . (ինչո՞ւ համար) :
 3. . . . (ի՞նչ ածական կը յարմարէ զինուարներուն) զինուարները . . . (մ'ւր) իրենց կեանքը վասնդի մէջ կը գնեն' . . . (ինչո՞ւ համար) :
 4. Երախտագէտ աշակերտ մը պարափի' . . . (Ք'նչղէս) աշխատի' . . . (ինչո՞ւ համար) :
 5. (Մանասէ անուն պղսիկ ողոյ մը իիձ կը ցանէր . . . (մ'ւր, ինչո՞ւ համար) :
-

Ի. — ԱՆՕԳՈՒՏ ՎԻՃԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Նախագիծ. — 1. Դղեակի մ'ասպաստանին մէջ երեք ձիեր կը խօսակցէին իշու մը վրայ որ անկիւնը կեցած էր (Նկարագրեցէք իշուն հանգարտ կհցուածքը): — 2. Ձիերն իրարու կը հարցնէին թէ արդեօք ի՞նչ րանի վրայ կը մտածէ սա իշուկն (Կրեւակայեցէք իւրաքանչյուր ձիու խորհրդածութիւնն): — 3. Երբոր իշուն կը հարցնեն, կը պատասխանէ թէ բանի մը վրայ չի մտածեր : — 4. Ի՞նչ կը խորհիք իշուն վրայ . ի՞նչ կը խորհիք ձիերուն վրայ :

ԻԱ. — ԿՑԱՒԱՔԱՂՆ (առակ)

Նախագիծ. — 1. Կտաւաքաղ մ'եւ իւր կինն երես կուտային իրենց զաւկին : (Ընդլայնեցէք) — 2. Տարիքն առած սարեակ մը խորհուրդ տուաւ որ ճամբորդութիւն մ'ընել տան անոր : — 3. Դեռատի ինքնահաւանին կրած ձախորդութիւնները (փայտփորի մը, անծեղի մ'եւ սոխակի մը

հետ)։ Վերջապէս կ'ուղղէ իւր վարքը։ — 4. Շփայած արդզոց հետ բաղդատեցէք։

ԽԱ. — ԶԱՆԴԱԿԸ

Նախագիծ։ — 1. Յակոր ու Յովիաննէս քաղաքէն կը վերադառնան . կը լսեն զանգակին ձայնն . Յակոր կը կարծէ թէ զանդակին ձայնն անձրևի նշան է (իւր դժգոհութիւնն)։ Իսկ Յովիաննէս հակառակը կը կարծէ (իւր գոհունակութիւնը)։ (Տրամախօսութիւնն) Խրարմ, կը բաժնուին՝ դժտեալ։ — 2. Յակոր կը բնակէր զանգակատան հիւսիսային կողմն, իսկ Յովիաննէս՝ արեւմտեան կողմը (բացատրեցէ՞ք հետեւութիւններն)։ — 3. Եթէ հանդարտօրէն վլճաբանէին կամ զիտցողի մը խորհուրդ հարցնէին

Մանօք. — ՀԱՐԱԽԱՑԻՆ ՀՈՎՆ արձեւաբեր է . ԱՐՍԻԵԼԵԱՆ ՀՈՎՆ նշան է թէ ոգը գեղեցիկ պիտի լինի։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 30.

Ուսումն բառից . — Գոյականներ գանել

1. Շատ մը տուներու խռովը կը կոչուի
2. Գէ-վէրու խոր մ'որ մէկ գիւղակիմբապեռվ (գ-րէն) կը կուազրուի՝ կը կոչուի
3. Այս աեղն որպ բնակիչք շատ աւելի են, տուներն ուղեղ գծերու վրայ շինուած են և փողցները՝ քարայտակ, կը կոչուի
4. Փաքը քաղաք (պ-լու, է-ռո-ղո) մ'որ տեղակալով (է-սիմում) մը կառավարուի, իրեն հետ միացեալ քանի մը գիւղակումբերով մէկ-աեղն կը կազմէ
5. Աւելի մեծ քաղաք մ'որ կը կառավարուի կառավարիչով (գ-նե-սուրբ), իրեն հետ միացեալ քանի մը վիճակներով մէկտեղ կը կազմէ
6. Այս կարեւորագոյն քաղաքն որ կը կառավարուի կուսակալով (կ-լ) մը, իրեն հետ միացեալ քանի մը գաւառներով մէկտեղ՝ կը կազմէ
7. Պետութեան մամէնէն գլխաւոր քաղաքն ուր կը նստի վէհապեալ, կը կոչուի

8. Խեմավ ծածկուած հարթ աղբնեւ կը կոչուին
 9. Լոյն ուղի մորդ երկու կողմը ծուռեւ անկուած են՝ կը կոչուի . . .
 10. Կերակուրը մանրող (լեռոց) ուժաւած կը կոչուին

ԽԵ. — ՀԱԿԱՌԱԿԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՈԳԻ

Նախագիծ .— 1. Պօղոս իւր իշուն հետ մէկտեղ կը հասնի



կամուրջի մ' առջեւ . Էշը

չուզեր անցնիլ (ըսէք թէ

Պօղոս ի՞նչ միջոցներ գոր-

ծածեց , որպէս զի առաջ

երթալու ստիպէ էշն). Ան-

ցորդները կը ծիծաղին: — 2.

Պօղոս լաւ ճարպք մը կը

Պօղոս բաղը ուժովը կը քաշէ . Իսկ դանէ . իշուն պոչէն կը քա-

շէ և էկոփ դէղի հակառակ կողմը . շէ , իբր թէ զայն դէպ ետ

բերել ուզելով : Էշն ալ դէպի ի հակառակ կողմը կը ձկտի :

Պօղոս թող կուտայ պոչն , եւ էշը կամուրջէն կ'անցնի :

Պօղոս ի՞նչ կ'ըսէ ծիծաղողներուն :

ԽԵ. — ՄՑՔԻ ԱՐԹՆՈՒԹԻՒՆ

Նախագիծ .— 1. Բաց պատուհանին մօտ՝ Մարիամ
 կ'աշխատի : Իր ստից առջեւ՝ կատուն կը լզէ իւր ձազը :

— 2. Ճնճղուկ մը ներս կը մանէ յանկարծ (նկարագրեցէք
 անոր սոսկումը) : Կատուն կը յարձակի ճնճղուկին վրայ :

— 3. Այն ատեն Մարիամ կը բռնէ կատուին ձագն եւ պա-
 տուհանէն վար նետել կը ձեւացունէ : Ասոր վրայ՝ կատուն
 թող կուտայ ճնճղուկը : — 4. Մարիամ կ'առնու զայն եւ
 պատուհանէն զուրո կ'արձակէ :

ՀՐԱՀԱՆ Գ 31.

Ուսումն բառից . — Ածականներ գտնել :

1. Այն անասունք որ խորհ կը մնանին՝ կը կոչուին
2. . . . է այն գետն որպ վրայ կարելի է ճառարիւլ :
3. Ուժնաղուղղանութիւն համար գործածուած զէնքն է
4. . . . է այն լեռն որուն մծանալ (մորթիւ) դժուարին է :
5. Քուր համ ունեցող պատղին կըսեն
6. Մէկէ աւելի (բողոք) գումարէ բաղկացեալ բառին կըսեն
7. Այն մարդն որպ խունեց իւ ըստուցածն զմեղ՝ կը կոչուի
8. Խէստ բնաւորութիւն (բորբ) ունեցողին կըսեն
9. . . . է այն անձն որպ վրայ ճառարիւն չունիք :
10. Ով որ թունը լը իւսէ՝ անոր կըսենք

ՀՐԱՀԱՆ Գ 32.

Ուսումն բառից . — Ածականներ գտնել :

1. Այն որ այլոց համելի ծառայութիւններ իւ լուսու՞՝ կը կոչուի. . . .
2. Ինչ որ անպատճառ ընկըս զորուածուած ենք՝ կը կոչուի
3. Այն առաջը զօր, առա կամ չտալ մեր խուն կարեալ է՝ կը կոչուի
4. Այն ձայնն որ չ լուսու՞՝ կըսուի
5. . . . է այն դիրքն յորում մէկէ մը խոսում չունիք :

**ԽԵ. — ԵՐԿՈՒ ԽԵՐՏ ԲԱՐԵԿԱՄԱՑ ՄԻԶԵԻ
ԳԺՑՈՒԹԻՒՆ ՄԸ**

- Նախագիծ.** — 1. Թովմաս (տղայ մը) եւ Բոր (շուն մը) սերտ բարեկամ են իրարու (ընդայնեցէ՞ք) : — 2. Առոտու մը՝ Թովմաս կ'ուտէ շաքարախառն կարագով օծուած հացի շերտ մը, իսկ Բոր կը կրծէ ոսկոր մը : — 3. Թովմաս՝ ուկորը կը դնէ երկու խոչոր քարերու միջեւ . Բոր կը հոսուաէ զայն, բայց չի կրնար առնուլ : — 4. Նկարագրեցէ՞ք Բէ Բոր ինչպէս կը խնդրէ տղէն որ սակորն իրեն դարձունէ : — 5. Բոր կը բարեկանայ, տղուն ձեռքէն հացի շերտը կը յափշտակէ ու կ'ուտէ : Երեկոյին՝ հաշտութիւն :

ԽԶ. — ՎԱՅԵԼՉԱԽՈՍՈՒԹԻՒՆ
Իրագիտական հարցեր . . . — Զուր

1. Առաւօտուն՝ երբ անկողնէն կ'ելնէք, առաջին անգամ ի՞նչ ծառայութիւն կ'ընէ ձևզի ջուրը :
 2. Մաքրութեան մասին ուրիշ բանի չե՞ն գործածեր ջուրը :
 3. Մեր սննդեան մասին ալ ծառայութիւն մը կ'ընէ՞ ջուրը :
 4. Դաշտերն ու պարտէղները ջրոյ պէտք ունի՞ն :
 5. Մարդկային աշխատութեանց մէջ օգնութիւն մը չ'ըներ ջուրը :
 6. Շողիի փոխուած ջուրն ալ բանի մը չի՞ ծառայեր :
 7. Կը ճանչէք այնպիսի ջուրեր զորս բժիշկները գործածեն իրրեւ դեղ :
 8. Զուրն ի՞նչպիսի վտանգներ կ'սպառնայ, երբոր շատ առաստ բլլայ երկրի մը մէջ :
 9. Ի՞նչ պիտի պատահէր, եթէ ջուր չգտնուէր :
-

ՀՐԱՀԱՆԳ 33.

Հետեւեալ պարբերութիւններն ամբողջացուցէք :

1. . . . (ի՞նչ ածական կը յարմարի մը շիւններուն) մը ջիւնները պաշտը կը դիղէն . . . (Երբ, ինչո՞ւ համար) :
 2. Զիւն եկած առեն. . . (ի՞նչ ածական կը յարմարի լուսիպյին) լուսիան հացի փշրանքներ կը թափէ պատուհանին վրայ. . . (ինչո՞ւ) :
 3. Շատ անդամ. . . (ի՞նչ ածկ. կը յարմարի դպրոցականաց) դպրոցականք կը խաղան դասարանին մէջ. . . (այն միջոցին ի՞նչ կ'ընէ առաւցիւը) :
 4. Ռուրէն. . . (ի՞նչ բանի վրայ կը դրէ) շնորհաւորական մը կը դրէ . . . (ի՞նչպէս), որպէսզի իւր հօրը մատուցանէ. . . (Երբ) :
 5. Լեւոն. . . (՞ւր) նատաճ՝ ջուրը նետեց իւր կարթն, և . . . (ի՞նչպէս) նայելով ակնդէտ կ'սպասէ այն վայրկենին յարում. . . (ի՞նչ բանի կ'սպասէ լեւոն) :
-

Ի է . — ԿԵՆԴԱՂԱԳԻՐԸ

Նախագիծ . — 1. Վառարանին վրայ կը տեսնուէր զինուորի մը լուսանկարը՝ շրջանակի մ՛ջ առնըւած : — 2. Օր մը (Ս. Յովհաննու տօնին օրը)՝ Պօղոս տեսաւ որ իւր մայրը նոր ծաղիկներ կը զետեղէր շրջանակին վրայ : Լուսամնկարը կը վերաբերէր Յովհաննէս քեռիին՝ որ սպաննուած էր 1870ին : (Տրամախոսութիւն :) — 3. Պօղոս՝ յուզուած սրտով կը չնորհաւորէ իւր հանգուցեալ քեռիին տօնախըմբըութիւնը :



«Մայրիկ բաւ
Պաղստ, Բնչ է պատ
հին կենդանագիւ
բըն որում փունջ
կը մասուցանեաւ»

Խ է . — ՄԱՔՐՈՒՀԻՒՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ

Նախագիծ . — 1. Տեղ եւ թուական : — 2. Մաքրուհի կ'ըսէ թէ իւր առաջին նամակն է այս, եւ թէ՝ զայն գրելու համար պէտք եղած բոլոր բաներն ունի : — 3. Կը պատմէ թէ վարժուհին ինչ պատուէրներ տուած է իրեն՝ նամակ գրելու մասին : — 4. Նամակի վերջաւորութեան այլ եւ այլ ձեւերն աչքէ կ'անցունէ . իր բարեկամուհիին յարմարող ձեւը կ'ընտրէ : Ստորագրութիւն : — 5. Հասցէ :

Մանօր . — ԳՐԵԼՈՒ ԱՏԵՆ՝ պէտք է հարցնենք մենք մեղի թէ ինչ ունինք ըսեյու : — Վերջանորուիթեան Զեհիլ՝ վերադպնդերու համար ակնածական պէտք է ըլլոյ , հաւասարներու համար՝ քաղաքավարական, բարեկամոց միջեւ՝ սիրալի :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 34.

Հետեւեալ պարբերութեանց անդամներն ամբողջացուցէք :

1. Շենքերուն դրսի կողմէ գտնուած սախակամածները կը ներկնին, . . . (ստրդու. նիդոթ. մը գտնել որդեռվագով) :
2. Երիսասարդական հասակիդ մէջ աշխատէ՛ և ինպատէր եղի՛ր, . . . (ստ. նիդոթ. որդեռվագով) :
3. Զճանշած առւնիդ բերանդ մի՛ ուանիր . . . (ստ. նիդու. որ ԱՌԵԼՆ Բեռվ) :
4. Զանա՛ հաճելի ըլլու սլլոց, . . . (ստ. նիդու. որդեռվագով) :
5. Թշուառներուն վրայ մի՛ ինդար, . . . (ստ. նիւ. ու գ' էսուցեավ) :

ՀՐԱՀԱՆԴ 35.

Ուսումն բառից . — Գոյականներ գտնել :

1. Այն զօրքերն որ հերէո՞ն կը ընթանան, հերէո՞ն կը պատերազմի՞ն՝ կը կոչուի՞ն . . . , և այսպիսի զինուուններու խումբը կը կոչուի . . .
2. Այն զօրէո՞ն որ ձիով կը ընթանան և ձիու վրայ հերո՞ն կը պատերազմի՞ն՝ կը կոչուի՞ն . . .
3. Անոնք որ Բնուածոնի վերաբերեալ ծառայութեանց մէջ կը գործածուի՞ն՝ կը կոչուի՞ն . . . , և այսպիսիներէ կազմուած խումբն ալ կը կոչուի . . .
4. Այն ժողո՞ն որ՝ Թշնամոցն գէմ պաշտպանուելու համար՝ բերդերու ամրացած է՝ կը կոչուի . . .

ԽԹ. — ԿՐԿԻՆ ԴԱՍ

Նախազիծ . — 1. Պետրոս անոն դեռատի սպասաւորը՝



շատ անգամ պտուղներ եւ որսի կենդանիներ կը բերէր Մակար աղային որ հարուստ ու կծծի ծերունի մ'էր :

— 2. Օր մը Պետրոս նապաստակ մը բերելով՝ կը մատուցանէ անքաղաքավար կերպով մը : — 3. Կծծին՝ դերերը փոխանակելով՝ կը հասկցունէ անոր թէ ի՞նչպէս պարտաւոր էր վարուիր : — 4. Պետրոս բազկաթուոփն մէջ ընկողմանած՝ անոր ձեռաձիր (պարզեւ) մը տալ կը ձեւացունէ : (Ամրող շարադրութիւնը՝ տրամախօսութեան ձեւով պիտի ըլլայ :)

Լ. — ԸՆՉԱՌԻՒԾՆ ԵՒ ՍԿԻՒԾՆ (Առաջ)

Նախազիծ . — 1. Սկիւռ մը՝ ծառի մը գագաթէն կ'իյնայ ընձառիւծի մը թաթերուն միջեւ : Սկիւռին կեանքը պիտի չնորուոփի իրեն, եթէ ըսէ ընձառիւծին թէ ինչո՞ւ համար այնչափ զուարթ է միշտ (ընձառիւծն ի՞նք թող խօսի): — 2. Սկիւռը կը խոստանայ պատասխանել, եթէ ընձառիւծը թոյլ տայ իրեն որ ծառին գագաթն ելնէ : (Տրամախօսութիւն) — 3. Սկիւռը կ'ըսէ թէ զուարթ ըլլալուն պատճառն այն է որ

իւր խիղճն հանդարտ է (ընդլայնեցէք), ընդհակառակն՝ ընձափւծը տիսուր է, վասն զի . . . — 4. Բարոյական :

Ա. Տ. — ԽՂՈՒՆՁՆ ՈՒ ԹՐԹՈՒՐՆ (Առակ)

Նախագիծ. — 1. Թրթուր մը խղունջի մը հանդիպելով կը բարեւէ զնա ընտանեբար : Խղունջը վիրաւորուած կ'զգայ իւր արժանապատուութիւնն (ի՞նչ կը պատասխանէ) : — 2. Քանի մ'օր ետքը՝ խղունջը մեծարանօք կը բարեւէ զթըրթուրն որ թիթեռնիկի փոխուած է : — 3. Թիթեռնիկն՝ հարկ եղած դասը կուտայ խղունջին : (Թիթեռնիկն ի՞նչ կրնայ ըսել . կենդանիներն իրենք թող խօսին :

ՀՐԱՀԱՆԳ 36.

Ուսումն բառից . — Գոյականներ գտնել

1. Պարտէզի մ'այն մասն ուր կը գտնուին հեգեղեաներու ծառերը՝ կը կոչուի իսկ այն մասն ուր կը տնկեն ու կը պատուաստեն մատղաշ բանիեր՝ կը կոչուի
2. Այն գործն որոց մէջ զինուարները տահու-ւ կը գնեն՝ կը կոչուի Որորդն եր ուղելիքը կը գնէ իւր մէջ .
3. Պատերազմի (—ում) զիտոյքներուն (միւրտ) կը սեն
4. Այն հանրային հոյակապ շէնքերն որոց մէջ կը պահուին իւր գոտին պատկերներ, արձաններ և հետաքրքրաշարժ աւարկաներ՝ կը կոչուին

Լ. — ԱԶ ԶԵՌԻՔՆ ՈՒ ԶԱԽ ԶԵՌԻՔՆ (Առակ)

Նախագիծ. — 1. Աջ ձեռքն՝ իր ըրած ծառայութեանց վրայ կը խօսի ինքնազովութեամբ (թուեցէք այդ ծառայութիւններն), եւ արհամարհանոք կ'ստգտանէ ձախ ձեռքն՝ անոր անգործութեանն համար : — 2. Զախ ձեռքն ինքզինք կը պաշտպանէ՝ ըսելով թէ մարդիկ պէտք եղածին չափ կը թութիւն չեն տար իրեն, եւ ա'յս միայն է իւր ետ մնալուն պատճառն , եւ կը թուէ իւր ըրած ծառայութիւններն — 3. Եղակացունելով կ'առաջարկէ որ սիրով ու միութեամբ վարուին իրարու հետ :

ՀՐԱՀԱՆԳ 37.

Ուսումն բառից. — Բառեր դանել

Խոչպես կը կոչուի. 1. Ցորենը քաղելու գործողութիւնն. — 2. Այժմեւը իմէն. — 3. Աւալուտեան կերակուրը. — 4. Կեսօրուսմն կերակուրն. — 5. Իրիկուա՞ն կերակուրը. — 6. Նո-ի բան դներէն կերուած կերակուրն. — 7. Եօթն օրուան տեւզութիւնն. — 8. Երեսն առն. — 9. Երեւ + - պ-ու. — 10. Վ. Է՞ ա-ու. — 11. Տառերկու ամքն. — 12. Հարիւր տարին.

1.9. — ՊԱՑԿԵՐՆԵՐՈՒ ՎՐԱՅ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ
Յակոբի հինգշաբթին և Յովհաննեսի հինգշաբթին



1. Ավալուտ.




2. Ավալուտ.



2. Կեսօրէն եաբը զուարճու.



6. Կեսօրէն եաբը ձանձրթ.




3. Լաւ երեկոյ.



7. Գեշ երեկոյ.



4. Ուրբաթ առաջու.



8. Ուրբաթ առաջու.

ՀՐԱՀԱՆԳ 38.

Ուսումն բառից. — Գոյականներ գտնել

1. Օսմաննեան բանակի (օրդու) մը հրամայու կը կոչուի
 2. Մէկ բանակը կը բաղկանայ տասներկու . . . է.
 3. Գունդը (ռը) մը դերը կը կոչուի
 4. Մէկ գունդը կը բաղկանայ չըը . . . է.
 5. Մէն մի վաշը (թուրք) հուշտ զինուորէ (հեծեր) կը բաղկանայ,
- այս պատճառաւ՝ վաշտի մը դերը կը կոչուի
6. Մէկ վաշտը կը բաժնուուի տասն . . . ի կամ . . . ի.
 7. Դասակի մը կամ գումարատակի (պետէ-լ) մը (հ-ըէ-լ զինուորաց) պերը կը կոչուի
 8. Զինուորի մ'ստացած առաջին աստիճանն է
 9. Այս զբութեր որ սւզզակի վեհափառ Սովորանի անշահան արամադրութեան ներքեւ կը գոնուուին՝ կը կոչուին
 10. Բանակի մը զբութեն՝ ի հարկին և բ-բ-բ-բ- խ-խ-խ- (ֆըտ-), որք կը կոչուին . . . կամ . . .
 11. զբութենէ մը հրամայու կը կոչուի
-

Լ.Պ. — ԿԵՌԱՍ ՈՒՏԵԼՈՒ ԼԱԽԱԳՈՅՆ ԿԵՐՊՆ ՈՒՐՆ Է

Նախագիծ. — 1. Հրանտ, Պետրոս եւ Յովիաննէս անուն երեք եղբայրներ, որ միեւնոյն վարժարանի աշակերտներ էին, մէյմէկ կողով կեռաս ընդունեցան իրենց մօրմէն

— 2. Հրանտ մէկ անգամէն կ'ուտէ ամբողջովին

3. Պետրոս՝ քանի մ'աւուր մէջ կ'ուտէ մաս առ մաս

— 4. Յոհաննէս՝ իւր ընկերներուն ալ բաժին կը հանէ

Խորհրդագութիւն :

Լ.Ե. — ՊԱՅԹԱԾ ԱԶՔԸ

Նախագիծ. — 1. Յակոբ՝ որ անհնազանդ տղայ մ'է . . . , իւր մօր մկրատին հետ կը խաղայ եւ զայն կը դարձունէ

— 2. Կը կանչէ իւր քոյրը՝ Մարիամն — 3. Զուանը կը կարի. մկրատը կ'երթայ կը պայթեցունէ Մարիամին աչքն. — 4. Յակոբին յուսահատութիւնն. 5. Եղյակացութիւն :

Լ.Զ. — ՑՂՈՒ Մ'ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿՆ՝

ԻՒՐ ՄԵՇ ՄՈՐ ՏՈՒԱԽՄԲՈՒԹԵԱՆՆ ԱՌԹԻՒ

Նախագիծ. — 1. Տեղ եւ թուական. — 2. Միհրան Գնունի իւր մեծ մօր կը պրէ թէ տարիէ մ' ի վեր դպրոց

Կերթայ — 3. Գիշ մը խոշոր կը գրէ , բայց այսուհետեւ աւելի փութաջան պիտի ըլլայ , եւ եկող տարի — 4. Իւր մնծ մօր տօնախմբութիւնը կը չնորհաւորէ . — 5. Վերջաւորութեան բանաձեւ եւ ստորադրութիւն : — 6. Հասցէ :


ՀՐԱՀԱՆԴ 39.

Ուսումն բառից . — Ածականներ գտնել

1. Շատ վրաներ ունեցող երկրին կը ըսեն
2. . . . է պյն հիւանդութիւն որ մէկէն միւսին կը ուրագուաէ, բնութէն է վարդախուզ :
3. Անդուներ ունեցող երկրին կը ըսեն
4. Անշարժ հուշունց համար վճարուած տուրքին կը ըսեն
5. . . . տուրք կը կոչուի այն տուրքը զոր կը վճարեն զնուորական չգնացող հպատակները :
6. . . . է պյն պալատն որոյ լինուունքն հոյուսու է :
7. Այն դէպքն որում չեն + ոնիւ-ըւ՝ կը կոչուի . . . դէպք :
8. . . . է պյն աշխատաւթիւն որ բնաւ վշտինութէ :
9. . . . է պյն մարդն որոյ դրւէ է լուսակ բանի մ'օրոշում տալու :
10. Զիւսուած հոգին կը ըսեն . . . կամ

Լ. Հ. — ՓՈՒԹԲԻԿ ԹՈՉՈՒՆՆԵՐԸ ԶՄԵԽԻ ԱՏԵՆ

Նախազիծ . — 1. Երկիրը ձիւնով ծածկուած էր , Փոքրիկ



Փոքրիկն Մարիամ
ամէն օր սեղանի
փշրանքներն հա-

ւաքելով՝ կը առ-
նէր բակը կը թա-
գէր թաշոց հա-
մար :

Մարիամը՝ սեղանին փշրանքները բակին
մէջ կը թստիէր թոչուններուն համար . — 2. Մայրը զիտել կուտար նմա թէ՝ իւր
այս ըրածը թէպէտեւ բարի գործ մ'է ,
այսու ամենայնիւ ուրիշ շատ թոչուններ
կը մնան անսնունդ : — 3. Մարիամ կը
մտածէ թէ ամէն փոքրիկ աղջիկներ իւր
ըրածին պէս կ'ընեն . . . — 4. Մայրը կը
համբուրէ զնա . . . (մայրն ու աղջիկն
իրենք թող խօսին):

Լ. Բ. — ԵՐԿՈՒ ԴՈՅԼԻՐ

Նախազիծ . — 1. Երկու դոյլեր , մէկը
պարապ՝ մէկը լցուն , իրարու հանդիպե-
ցան հորի մը մէջ : — 2. Պարապ դոյլը միւսին կը հարցնէ

թէ ինչու կուլայ . . . : Լցուն դոյլն՝ որ ամէն բան սեւ կը տեսնէ , կը պատասխանէ . . . (ի՞նչ) : 3. — Պարապ դոյլն՝ որ զուարթ կեանք մ'անցունելու սովորած է , հակադարձ պատասխան մը կուտայ . . . (ի՞նչ կ'ըսէ) : — 4. Բարոյական:

1.Թ. — ՎԱՅԵԼՉԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Իրագիտական հարցեր . — Կրակ

1. Կրակն ի՞նչ ծառայութիւններ կը մատուցանէ մեզ :
2. Ձեռուցման համար ի՞նչ նիւթեր կը գործածուին գլխաւորապէս :
3. Որո՞նք են լուսաւորման գլխաւոր միջոցները :
4. Կրակն ի՞նչ ծառայութիւններ կը մատուցնէ մարդկային աշխատութեանց :
5. Պատերազմի մէջ ի՞նչ ծառայութիւն կը մատուցանէ կրակը :

6. Կրակը կրնայ՝ նաև վտանգներ պատճառել :
7. Այս վտանգներուն գէմ՝ ի՞նչ նախազգուշութիւններ կրնանք ձեռք առնուլ : (Խոհեմութիւն , ջրհան , հրդեհի դէմ ապահովագրութիւնք :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 40.

Հետեւեալ պարբերութիւններն ամբողջացուցեք :

1. Այս ճերմակեղեները բաց օդին մէջ թող մնան . . . (ստորդ . նիւթաթ . գուշ-որ շաղկապով):
2. . . . (ստորդ . նիւթաթ . երբ ով սկսեալ), անկեղծօրէն խղառավանել զայն :
3. Այս մարդն . . . (ստորդ . նիւթաթ . որ յրբ . դերանունով)՝ և մէկու մը սիրելի կըլլսու:
4. Ուսուբէնը վարժարան չեկաւ, . . . (ստորդ . նիւթաթ . լուսով ով):
5. Ուսուբէն չկըցաւ մըցանակ առնուլ, . . . (ստորդ . նիւթ . բեր-ով):

Խ. — ՊԱՐՈՒՆ ԹՈՎՄԱՍ ԵՒ ԽԵՐՈՒՆԻՒՆ ՑԱԿՈԲ

Նախագիծ : — 1. Թովմաս կը կարծէ թէ ինք շատ խորամանկ է: — 2. Թովմաս եւ իւր բարեկամը՝ Սուրէն՝ կը հանդիպին ծերունի Յակոբին . . . — 3. Թովմաս կը հարցնէ անոր թէ տակաւին նոյնչափ են զիւղին էշերը : Ծերունին Յակոբ՝ արժանաւոր պատասխանով մը՝ լու զաս մը կուտայ անոր : — 4. Սուրէնի խորհրդածութիւնը (Խող անձերն իսկ խօսին):

ԽԱ. — ՄՏԱԾՈՎԼՈՐ ԴԻՑՆԱԿԱԽՆԸ

Նախագիծ. — 1. Գ. Ք. անուն գիտնականը մտամոլոր է. — 2. Օր մը՝ կը կարծէ թէ իւր բարեկամին տունը մոռցած է իւր ոսկիէ ծխատուփը. — 3. Փոքրիկ տոմսակ մը կը զրէ անոր (շարադրեցէ՛ք այս տոմսակը). — 4. Տոմսակը գողելու վայրկեննին՝ ծխատուփը կը գտնէ. այս պարագա՞ն այ յաւելագրով⁽¹⁾ մը կ'իմացունէ իւր բարեկամին (շարադրեցէ՛ք այս յաւելագիրն), եւ տոմսակը կը զրկէ դարձեալ իւր բարեկամին

ԽԲ. — ԳԱՆՁԱՆԱԿ

Նախագիծ. — 1. Գէորգ անուն փոքրիկ տղայ մը լաւ կ'աշխատէր. Ամէն շաբաթ օր՝ հայրը քսան փարայ կուտար անոր. Գէորգ խնայող էր — 2. Տարին լրացած տան՝ կը բանայ գանձանակն՝ ուր կը յուսոյ գտնել — 3. Զարմանալի՛ բան. կը գտնէ յիսուն գանձական Ծնողքն՝ առանց բան մը յայտնելու իրենց զաւկին խնայութեան վրայ աւելցուցած էին — 4. Գէորգ բաժանորդ կը զրով հրատարակութեան մը⁽²⁾.

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 41.

Հետեւեալ պարբերութիւններն ամիւ. լրջացուցէ՛ք :

1. . . . (յարմար ածական մը) շուալ. գիշերը միս մինակ կը զտըսի . . . (մէկ. ոյն առեն ի՞նչ կ'ընեն ադարա՛ին մարդիկը).
2. . . . (Ե՞րբ), ճպուռը մրջիւնին դիմելով . . . (ի՞նչ կերպարանքով) կը ինդրէ քանի մը հատիկներ . . . (ի՞նչու համար).
3. . . . (Ե՞րբ)՝ ծիծա ները կը մեկնին մեր երկրէն . . . (ի՞նչու համար), և . . . (Ե՞րբ) կը վերադաշնան՝ . . . (ի՞նչ ընելու համար).
4. . . . (Ե՞րբ), զահականոցին առջեւ կեցող զինուորներն՝ . . . (ի՞նչ շարժումով) կողջունեն զնա . . . (ի՞նչպէս).

(1) Յ-Ե-Ւ-Է-Ւ-Է համ ՅԵՐ ԳԵՐ-Ե-Ւ-Ն կ'ըսուփ ոյն յաւելուածը զըր հարկ կ'ըլսու ընկը համակն սոսոր, ագրելէ յեսոյ. Յ-Ե-Ւ-Է-Ւ-Է համ ՅԵՐ ԳԵՐ-Ե-Ւ-Ն կ'սկսէ Յ. Գ. ոկրնատառերով.


(2) Լրտգրի մը համ հրատառակութեան մը բաժանորդ գրուի. կը նշանակէ օրոշեալ գումար մը վճարել՝ նոյն լրտգիրը համ հրատառակութիւնն ստանալու համար.

ՀՐԱՀԱՆ Գ 42.

Ուսումն բառից. — Գոյականներ գտնել

1. Թռչունը կը վերադառնայ իւր
2. Նապաստակը, ճագարն ու արջը՝ կը մտնեն իրենց . . . մէջ .
3. Աղքատները կը բնակին . . . կամ . . . և կամ . . . մէջ .
4. Վեհափառ Առւթանի բնակարանը կը կոչուի
5. Օսմանցի մեծամեծաց բնակարանները կը կոչուին
6. Իւղանձն մը (աւելի) բուռն (իւնե) կը կոչուի
7. Մեկու մը խնդ և յը (տեղը)՝ կը լինի անոր

Խ Գ. — ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒԻ ՎՐԱՅ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ
Մղլակի մը պակասութիւնը



1. Մղլակը նորոգել տուածչէն,



2. Փախուստ:



3. Հայածումն:



4. Անկումն և ճղմուտծք



5. Մինակ թողուած տունը:



6. Վնասները կը հաշուեն:

Հ Ր Ա Հ Ա Ն Դ 43.

Ուսումն բառից. — Ածականներ գտնել

1. Այն իրամ ընդ որ կարելի չէ անցել կը կոչուի
 2. . . . է այն բաղաքը զոր ժամանակ անցնելէ յետոյ կը բառնանք.
 3. . . . է այն ճակատամարտն որպէս մէջ շատ արիւն կը թափուի.
 4. . . . է այն մարդն որ սահու կը հիւնադաւոյ.
 5. . . . կամ . . . է այն արդիւնք զոր վիճակ յառաջ, որում վիճակը:
 6. . . . է այն բանն որ երեսունայութեան մէջ միայն գոյութիւն ունի.
 7. . . . է այն ընթերցումն որ կը կրթէ, կը հրահանէ զմեզ.
-

Խ Գ. — ՍԱՆԴՈՒՂԻ ՄԸ ՎԵՐԻՆ ԵՒ ՍՏՈՐԻՆ ՄԱՍԻՐԸ

Նախագիծ. — 1. Սանդուղի մը վերին առաջնաններն արհամարհանոք կը խօսին ստորին սասահճաններուն հետ (ուղղակի արհամախօսութիւն): — 2. Խելացի մարդ մը վեր ի վայր կը դարձունէ սանդուղն Հետեւութիւն: — 3. Կենաց մէջ ալ յաճախ այս բանը կը պատահի երջանիկ եւ դժբաղդ մարդոց համար: — 4. Բարոյական:

Խ Ե. — ՆԱՄԱԿ ԱՌ ՈՒՍՈՒՑԻՉՆ

Նախագիծ. — 1. Տեղ ու թուական: — 2. Աշակերտ մ'իր վարժապետէն հրաման կը խնդրէ՝ յառաջիկայ երկուշարթի բացակայ լինելու համար (շարժառիթ մը հնարեցէք): — 3. Խեր փաստերը կ' պարզէ (փաստեր դաշէք): — 4. Կը խոստանայ թէ պիտի դարմանէ ժամանակի այս կորուստն (ի՞նչպէս): — 5. Բանաձեւ վերջաւորութեան եւ ստորագըրութիւն: — 6. Հասցէ:

Հ Ր Ա Հ Ա Ն Դ 44.

Ուսումն բառից. — Բայեր գտնել

1. Բան մ'աւելի հաւաք ընելուն կըսեն — 2. Աւելի հաւաք — 3. Աւելի երեւ — 4. Աւելի վասրբ — 5. Աւելի հասդարան — 6. Աւելի բարագ — 7. Փունք վերածել — 8. Աւելի ուղղ ըլլուլ — 9. Աւելի եւլցէլ — 10. Աւելի համարտ ընել — 11. Աւելի լոյն — 12. Քաղաքաբան առաջ մէկու մը
-

ԽԶ. — ԴԻՒՇ, ԴԻՒՇ, ԴԻՒՇ

Նախազիծ. — 1. Մայիսի մէջ (նկարագրեցէք), սոխակ մը կ'երգէր . էշ մը կ'ուզէ նմանիլ անոր . — 2. Սոխակին կը հարցնէ թէ ի՞նչպէս կ'ընէ . թռչունը կը պատասխանէ (տրամախօսութիւն) : — . էշն ալ կ'ուզէ ընել դիւ՛, դիւ՛, դիւ՛ . Զո՛ւր ջանք — 4. Բարոյական :

**ԽԵ. — ՊԱՌԱՒ ՀՕՐԱՔՈՅԹ ՄԸ՝ ՈՐ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ
ԱՐՈՒԵՍՏԷՆ ԿԸ ՀԱՍԿՆԱՅ ՔԻՉ ՄԸ**

Նախազիծ. — 1. Հինգարթի օր մը՝ կէս օրէ ետքն՝ Հրանտ անուն փոքրիկ տղան իւր պառաւ հօաքրոջ՝ Մարթա խաթունին տունը զնաց . — 2. Պարտէզն երթալու թոյլառութիւն կը խնդրէ . հօրաքոյրն հրաման կուտայ՝ պայմանաւ որ մորենիներուն չդպչի : — 3. Պարտէզին մէջ՝ Հրանտ անգամ մը տեղի կուտայ փորձութեան — 4. Վերադարձին, հօրաքրոջն հարցման վրայ, կ'ըսէ թէ մորենիի պառուղէն կերած չէ (տրամախօսութիւն) : — 5. Սակայն պրատուղին հոտը կը մատնէ զինքն (ըսէ՛ք թէ ի՞նչպէս), եւ կը խոստովանի իւր ստախօսութիւնը :

ԽԸ. — ՎԱՅԵԼԶԱԽՕՍՈՒԻԹԻՒՆ

Իրագիտական հարցեր. — Թափծու երկար, երկար եւ պողպատ

1. Ի՞նչ նիւթէ շինուած են գպրոցին վառարանը, գրադարանին բանալին եւ զմելիին շեղը :

2. Թափծու երկաթն, երկաթն եւ պողպատը կը նմանին իրարու . ի՞նչ տարբերութիւն ունին իրարմէ :

3. Թափծու երկաթին առաւելութիւններն ի՞նչ են :

4. Ի՞նչ են իւր անպատեհութիւնք :

5. Ի՞նչ է թափծու երկաթն :

6. Երկաթն ի՞նչ յատկութիւններ ունի :

7. Ի՞նչ է կոածը (սաճ) :

8. Թանագն (նէնեկե) ի՞նչ է :

9. Գալվանացեալ երկաթն ի՞նչ է :

10. Անազի կամ զինկի խաւն ի՞նչ ծառայութիւններ կ'ը-
նէ երկաթին :
11. Ի՞նչ է պողպատն :
12. Ի՞նչ յատկութիւններ ունի պողպատն :
13. Ի՞նչ բաներ կը շննեն պողպատով :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 45.

Ուսումն քառից . — Բառեր գանել

1. Թաղական խորհրդայ անդամներ կամ երեսփոխաններ ըստքեւու-
համար ունեւ առյլ՝ կը կոչուի կամ
2. Քուեւ ոռուողներուն (որինակ) կ'ըսեն
3. Երբար ամեն մարդ միեւնոյն բանին կը հաւասար իբր ունի ձայնուն,
անոր կ'ըսեն
4. Մորդ ող նեւըսն կ'ըսեն չոյն ողաննողն
5. Միջուրուողն կ'ըսեն ոյն փոշին որ ջնջելու կը գործածուի .
6. Շատ մը բաներ որք ոյլ և ոյլ աեղերէ հասաւուած են՝ կը
կ'ըսուին
7. Կաւառացներու ունեւ եղող մարդուն կ'ըսեն
8. Բանջարելիներ աբասդրող դարսեցը կը կոչուի

Խթ . — ՏԱՆ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆԸ

Նախագիծ, — 1. Պետրոսի մայրը կը ջանար որ հա-
գուստներն աւելի՛ դիմանան . . . (ի՞նչ-
պէս): Պետրոս կը ցաւի որ հարուստ
չեն (ինչո՞ւ համար): — 2. Մօրը պա-
տասխանն. — եթէ դերձակին վրայ ըլ-
լար կարկտուքի հոգն, այլ եւս ինք
չպիտի ըլլար տան նախախնամութիւնը
. . . . — 3. Պետրոս՝ զգածուելով՝ կը
համբուրէ իւր մայրն եւ կ'առաջա-
դրէ



Եթէ մեծահարուս
տիկին մը ըլլայի, ը-
մաւ մայրն հանդար-
տորէն, ոյն առեն
գերձակը պիտի ըլ-
լար առն նախախնա-
մութիւնը . . .

Խ. — ԱՄՍՈՐԵԱՑ ԴԱՍՈՒՑ
ՏԵՏՐԱԿԸ

Նախագիծ. — 1. Ի՞նչ է ամսական
գասուց աետրակն : — 2. Խնամով պիտի գործածէք զայն

(ինչու համար) Այս տեսրակն ի՞նչ պիտի յիշեցունէ ձեզ ապագային : — 3. Ի՞նչպէս պիտի ընէք որ ապահով ըլլաք թէ յառաջդիմած էք :

ԴԱ. — ՏԱՐԻԴԱԼԽՈՅ ԱՌԹԻՒ ՆԱՄԱԿ ԱՌ ԿՆՔԱՀԱՅՐՆ

Նախազիծ . — 1. Տեղ եւ թուական : — 2. Գրքի մը մէջէն չնորհաւորական մը պիտի օրինակէք , բայց . . . : — 3. Նախամեծար կը համարիք որ ձեր մտքէն բիսին ձեր գրելիքները : Բարի տարի կը մաղթէք : — 4. Ի՞նչ կ'ըսէք ձեր ծնողաց կողմէն : — 5. Բանաձեւ վերջաւորութեան եւ ստորագրութիւն : — 6. Հասցէ :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 46.

Ուսումն բառից . — Ածականներ գանել

1. Առևշտ եվերէ գտնուող քաղաքաց կը սեն
 2. Այն ցուցահանդէն ուր ի տես կը դրուին եւը-էւը-էւը-էւը-
 - արդիշները՝ կը կոչուի . . . ցուցահանդէն :
 3. Այն գորոշական նիշերը որք եւեւ սիս անդամ մը կը որուին աշակերտաց՝ կը կոչուին . . . նիշեր :
 4. Այն գործը զոր անմիջապէս ընելու սրբութեան ենք՝ կը կոչուի . . . գործ :
 5. Այն քաղաքն որպէս մէջ բնակող հորտի բովութեան՝ կը կոչուի . . . քաղաք :
 6. Այն աշխատութիւնը զոր յարատեւութեամք կը կատարենք սրբութեան՝ կը կոչուի . . . աշխատութիւն :
 7. Այն հացկերյթն որպէս մէջ բովութեան հորտիներ (ուտելիք) կան՝ կը կոչուի . . . հացկերյթ :
-

ԴԲ. — ԳԱՐԻՆ ՏԵՍԱԿԵՆ ԿԱԽՈՒՄՆ ՈՒՆԻ

Նախազիծ . — 1. Վարժարանին մէջ , ուսուցիչը՝ բարձրագոյն կարգի աշակերտաց կը ցուցնէ թէ թթուներն ի՞նչ ազդեցութիւն կ'ընեն քարերուն վրայ (ուսուցիչն ի՞նք թող խօսի) : Պօղոս անուն փոքրիկ տղան՝ տուն եկած ատեն՝ կ'ուզէ փորձը կրկնել : — 2. Իւր անյաջողութիւնը (տեսարանը նկարագրեցէք) : — 3. Կերակուրի ատեն՝ հայրը կը բացատրէ յաջողելուն պատճառը , Բարոյական :

Մանօր. — Երբոր կանոնիկ (Խ-յԲ) քարե փաքը կտոր մը ձգենք քացախին մէջ, կազի (-Ն-Ե-Ր-Ի- Բ-Ի-Ն-) փաքը կի պղղջակներ կը դաշնան։ — ԿԱՑԾ ԲԱՐ. Եթէ հրացանի համար գործածուած տեսակէն կոյծ՝ քար մ'ըլլու ձգուածը, պղղջակներ չեն դաշնար, վասնդի քացախը կործը քարերու վրայ աղդեցութիւն չըներ,

ՆԳ. — ԶՈՐ ՍԱԼՈՐԻ ԱՄԱՆԸ

Նախազիծ. — 1. Զոր սալորներ նեղբերան ամանի մը մէջ Պետրոս իւր մօրմէն հրաման կը խնդրէ անոր մէջէն բուռ մ'առնելու (Խօսակցութիւն)։ — 2. Պետրոս ձեռքը մէջը կը խոթէ , յետոյ չի կրնար այլ եւս դուրս հանել (ըսէք թէ ինչո՞ւ համար)։ — 3. Մայրը խորհուրդ մը կուտայ։ — 4. Բարոյական։

ՆԳ. — ՓՈՔԻԿ ՔՐՈԶ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Նախազիծ. — 1. Փոքրիկ Տիրուհին հիւանդ է Նորա եղյօրն ու քրոջ, Պետրոսի ու Մաքրուհիի, արտմութիւնն . հիւանդին նեղութիւն պատճառելէ եւ իրենց մայրն յոգնեցունելէ կ'զգուշանան — 2. Տիրուհիի վիճակը կը բարուքի . Պետրոս եւ Մաքրուհի հոգ կը տանին զայն զրօսցունելու։ — 3. Տիրուհին կ'առողջանայ։ Մայրը կը զովէ Պետրոսի ու Մաքրուհիի ունեցած վարմունքը։

Հ Յ Ա Հ Ա Ն Գ 47.

ԿԵՆԴԱՅՆՈՒԹԻԱՆ ՄՈԱԼ ՎԱՐԲԵՐՈՒԹԻԱՆ

1. Երբոր կը պառկիս . . . (ածական) անկողնիդ մէջ զըր մայրդ կը յարդարէ . . . (միւ.), Երբոր կը հծկիս . . . (ածկ.) վերմակիդ ներքեւ, միաբդ ըներ աղքատիկ որբերը։

2. Զմրան իրիկունները՝ կը լըենք հովին . . . (ածկ.) սպյլ . . . (ածկ.) ծառոց մէջ։

3. Կէս օրէ եռքն էր. արեւին . . . (ածկ.) մէկ ճառագոյթը՝ ներս կը թափանցէր . . . (ածկ.) աղակիններէն. խոհանոցին մէջ գլունըած . . . (ածկ.) պղինձները, . . . (ածկ.) անհագով օծուած ամանները՝ բոլորն աւ կը շալսյին, և կը լսուէր ժամացոյցին . . . (ածկ.) թիկ-թիկը։

4. Օրուան առաջին ժամէն ի վեր՝ եղները . . . (ածկ.) արօրը քաշելով ակօս կը գծեն . . . (մակը.), . . . (ածկ.) խոփը վեր կը վերցուածէ խոշոր ու . . . (ածկ.) հողախոշակին. առաւատեան թարմ օդին մէջ . . . (ածկ.) սիւք մը դուրս կ'ելնէ եղներուն քթէն։

ՆԵ. — ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ՎՐԱՅ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

թէ ի՞նչպէս կրնայ օգտակար լինել տասն եւ մեկ տարեկան
տղայ մը



1. Ցանձնարարութիւններ :



2. Ուռզում :



3. Մեծ հոր հետ ըրջադա-
յութիւն :



4. Փոքրիկ քրոջը հետ զրո-
ւանք :



5. Լեռն գրադրութիւն կ'ընէ .



6. Ընտանեաց մէջ ընթերցում :

ՀՐԱՀԱՆԳ 48.

Ուսումն բառ.ից . — Գոյականներ դանել :

1. Երբոր կրակի վրայ դրուած հեղուկ մ'եւ—ւ կ'ոկոի, այդ վիճակին
կ'ըսնենք

2. Ազրանքի մը ի—ւր—ւեւ շնելուն կ'ըսնեն

3. Յակոբ՝ գէշ սեսակէ սունկ սւտելով թունաւորուեցաւ . թոյնը Է-ՔԵԼԸ համար դեղ մը տուաւ բժիշկն . ոյս դեղին կըսեն
4. Վերակարգեալ պղպջի մը հրամանաց Խախութեւ- ողոյին կըսեն
5. Դրութի էրոյին կըսեն
6. Անոնք որ միւնոյն հայրէնէի մէջ ծնած են՝ կը կոչուին
7. Բժիշկներ, փաստաբաններ, ուսուցիչներ՝ . . . կը կոչեն զիբար .

ՆԶ. — ՄԵՂՈՒՆ ԵՒ ԹԻԹԵՌՈՒՆԻԿՆ (Առակ)

Նախագիծ. — 1. **Մեղու մը՝** իւր փեթակը վերադառնաւ-
լու միջոցին՝ կը պատահի թեթեւաշարժ թիթեռնիկի մը : —
2. **Մեղուն կծու խօսքեր կ'ուղղէ** թիթեռնիկին թի-
թեռնիկն ինքզինքը կը պաշտպանէ — 3. **Մեղուն կը**
շարունակէ. թիթեռնիկը կը պատասխանէ թէ մեղուն արդա-
րեւ օգտակար է (ի՞նչ բանով), բայց թէ՝ իրեն ալ պաշտօնն
է հաճոյք պատճառել աչաց (ըսէ՛ք թէ ի՞նչպէս) :

ՆԷ. — ԴԵՐԱՏԻ ԱՂՋԻԿ ՄԸ ԿԸ ԳՐԵ ՏԻԿՆՈՉ ՄԸ՝
ՈՐՈՅ ՔՈՎ ԿԸ ՓԱՓԱՔԻ ԾԱՌԱՅԵԼ ԻԲՐԵՒ ՍՊԱՍՈՒՀԻ

Նախագիծ. — 1. **Տեղ ու թուական :** — 2. **Տիկինին քով**
մտնելու փափագ կը յայտնէք : — 3. **Կ'ըսէ՛ք թէ ի՞նչ կրնաք**
ընել եւ ի՞նչ կուզէք շահիլ : — 4. **Կ'ուղէք այն տիկնոջ քով**
մտնել՝ այն պատճառաւ որ գիտէք անոր բարեսիրտ լինելը : —
5. **Կը խոստանաք կատարել ձեր պարտաւորութիւնները**
(թուեցէ՛ք մանրամասնաբար) : — .. ։ **Մեծարանաց բանաձեւ**
եւ ստորագրութիւն : — 7. **Հասցէ :**

ՆԸ. — ԱՂԲԻՒՐՆ (Արեւելեան վիպակ)

Նախագիծ. — 1. **Նկարագրեցէ՛ք աղբիւր մը՝** որոյ վերեւ
կը կարդացուի սա խօսքն . « Ինձմէ օրինա՛կ առէք : » — 2.
Վաճառական մը , ծերունի մ'եւ տղայ մը կուգան այդ աղ-
բիւրէն ջուր խմելու եւ կը կարդան արձանագրութիւնը : —
3. **Վաճառականը կ'ըսէ թէ աղբիւրը կը յորդորէ զմարդիկ ի**
գործունէութիւն եւ ի յարատեւութիւն (ի՞նչո՞ւ համար) : —
4. **Մերունին կ'ըսէ թէ կը յորդորէ ի բարեգործութիւն (ի՞ն-
չո՞ւ համար) : — 5. **Տղան կ'ըսէ թէ աղբիւրը կը յորդորէ որ**
մաքուր պահենք մեր սիրտն (ի՞նչո՞ւ համար) :**

ՀՐԱՀԱՆԳ 49.

Ուսումն բարից . — Գոյականներ գտնել

1. Հացի կամ կերակրոյ այն մասն զոր մէկ անդամէն բերանս կը դնեմ՝ կը կոչուի
2. Քայլելու ատեն՝ սրումքներու ամէն մէկ բացուածքին կը ըստն
3. Պարտէղի այն մասն ուր նոցիներ անկուած են՝ կը կոչուի
- և որովհետեւ այդ ծաղիկներն ընդհանրապէս անուշ հօս է բարձն՝ կրնայ կոչուի նաեւ
4. Օդին մէջ պատահող երեսոյներուն՝ կը ըստի .
5. Այն ժողովս որ կը կազմուի վեհապետներէն կամ անոնց ներկայացուցիչներէն՝ կը կոչուի
6. Այն հաստատութիւն յորում ուսուեադներ կը սովորեցունեն՝ կը կոչուի
7. Այն ժողով որ սեղանի վրայ կ'արտասահնուկի բ-եւ-է ի ձեռքին՝ կը կոչուի

ՄԹ. — ԵՐԿՈՒ ՄՈՒՐԱՑԻԿՆԵՐԸ

Նախագիծ . — 1. Գարուն է (նկարագրեցէ՞ք) : Ճամբան վրայ կեցած է ծերունի կոյր մուրացիկ մը : — 2. Ուրիշ մուրացիկ մը՝ որ կոյր չէ, կ'անցնի այն տեղէն. դաշտի տեսարանը կը դիտէ հաճոյ քով — 3. Կարեկցելով կոյրին վրայ որ, անոր կուտայ տասնոց մը. զոր քիչ մ'առաջ ընդրւնած էր մէկէն :



Մուրացիկը կամացուկ մը կոյրին ձեռքին մէջ կը դնէ այն տասնոցը զոր քիչ մ'առաջ ընդրւնած էր մէկէն :

Կ. — ՎԱՅԵԼԶԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Իրագիտական հարցեր. — Ապակիի օգտակարութիւններն

1. Ի՞նչ բաններ կը շինեն ապակիով :
2. Ապակիի շինուած շիշերն ու գաւաթներն ի՞նչ առաւելութիւններ ունին :
3. Ապակինի կերում օգուան ի՞նչ է :
4. Ի՞նչ բանի կը ծառայէ հայելին :

5. Ի՞նչ բանի կը ծառայէ ժամացոյցներու երեսը դրուած ապակին :

6. Երբսր պատկերները՝ շրջանակի մէջ անցունելով՝ պատէն կախել ուղինք, ինչո՞ւ համար ապակիի կտոր մը կը զնենք վրան :

7. Աւելի լաւ տեսնելու ալ չի՞ ծառայեր մեղի ապակին :

8. Պարափպաններուն ալ ծառայութիւն մը կ'ընէ ապակին :

9. Պատճառն ի՞նչ է որ ապակեայ ծածկողի մը տակ դրուած առնեն՝ ուրիշ առնեկէ մ'աւելի ջերմութիւն կ'ըստանայ :

10. Անպատեհութիւններ ալ ունի՞ ապակին :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 50.

Ուսումն բառից. — Բայեր գանել

1. Երբոր երկրի մը բազմութեան կը նուազի, կըսենք թէ երկեր :
2. Տուն մը չոհ կարառեօք զարդարելուն կ'ըսեն . . .
3. Երբ մէկը ջանայ որ իւր հուշացն հաւասարի, կըսենք թէ . . . անոր չեմ :
4. Արևին մէջ դրամ (գուշ) գնելուն կ'ըսեն . . . կամ . . .
5. Երբոր գետի մը ջուրը սովորականէն աւելի առատ, յօրդ լինի, կըսենք թէ գետն . . .
6. Մէկու մը ձեռքը վնատ տալուն կ'ըսեն . . .

ԿԱ. — ՅԱԿՈԲ ԵՒ ԿԱՏԱՐԻՆԵ

Նախագիծ. — 1. Յակոբ զէշ կը վարուի կատարինէ անուն սպասուհւոյն հետ : — 2. Օր մը Յակոբ, փոխանակ աշխատելու, պատուհանէն կը դիտէ զկատարինէ որ փողոցին մէջ կը խօսակցի : — 3. Ժամավաճառ լինելուն համար կը կշտամբէ զնա եւ կը հարցնէ թէ ինչ կը պատմէ դրացուհւոյն : — 4. Կատարինէի թմրանը դրէ՛ք այնպիսի պատասխան մը՝ որով վրէ՛ք մը լուծած լինի Յակոբի չարասրտութեան դէմ : — 5. Դրացուհւին կը ծիծաղի եւ Յակոբ կ'ամընայ :

ԿԲ. — ԴԺՆԴԱԿ ՕՐ ՄԸ

Նախագիծ. — 1. Յովհաննէս անուն փոքրիկ տղան՝ որ ծոյլ է, դպրոց երթալու պահուն կ'ըսէ թէ հիւանդ է . . .

Մայրն ալ թոյլ կուտայ որ անկողնոյն մէջ մնայ : — 2. Ճա:ի միջոցին՝ Յովհաննէս մեծ փափագ ունէր երներու (ինչու համար) . բայց մայրը դէմ կը կննար՝ խոհեմութիւն ընելով : — 3. Ժամը հինգն է . Յովհաննէս ձանձրացաւ (ինչու համար) : — 4. Դուք ալ Յովհաննէսին պէս ընել կ'ուզէք :

ԿՊ. — ՈՒՇԱԴԻԲ ՏՂԱՆ

Նախագիծ . — 1. Լեւոն գիրք մը փոխ առաւ Երուանդէն . ի՞նչպէս հոգ պիտի տանի որ գրքին վնաս մը չհասնի (մանրամասնօրէն բացատրեցէք) : — 2. Երուանդ ուրիշ գըրքեր ալ փոխ պիտի տայ անոր :

ԿՊ. — ԱՆՈՒՇԱԴԻԲ ՏՂԱՆ

Նախագիծ . — 1. Գառնիկն ալ գիրք մը փոխ առաւ Երուանդէն : իւր անհոգութիւնը (մանրամասնօրէն բացատրեցէք) : — 2. Երուանդ ոչ եւս գիրք պիտի տայ անոր . . .

ՀՐԱՀԱՆԴ 51.

Ուսումն բառից . — Գոյականներ գտնել

1. Լեւոն թեթեւ հարրուկ մուռնի . ասոր կըսեն պարզապէս . . .
2. Մարիամ թռաբանպ ունի . ասոր կըսեն . . .
3. Այն հաստատութիւն ուր կընդունուին և կը դարձանուին հիւնադանիւր՝ կը կոչուի . . .
4. Այն հաստատութիւն ուր կընդունուին և ցիկանս կը ինամուին անվեճուր՝ այսինքն՝ ծերունիւր և հիւնադանու անձինք . կը կոչուի . . .
5. Երբ երկրի մը մէջ բաւական ցորեան չի գտնուիր և հացին գինը շափազանց կը բարձրանայ , կըսենք թէ . . . կոյ այն երկրին մէջ .
6. Երբ ուտեատ այնքան նուազ է որ բազմաթիւ աղբատներ առերաջ կը լինին , կըսենք թէ . . . կը տիրէ .

ՀՐԱՀԱՆԴ 52.

Ուսումն բառից . — Ածականներ գտնել

1. Այն հիւնադանութիւն որ միւնոյն ժամանակ համընկն է գուշակ մէջ . կը կոչուի . . . հիւնադանութիւն .
2. Շաքարի և աղի նման բաներն որք չըսրի մէջ կը հալին , իւնադանիւր . . . կը կոչուին :
3. Քթի (անդան) մէջն հնչուող ձայնին կըսեն . . . ձայն .
4. Այն մարդն որ իր զարուց կարող է հարացնել կամ վարել կըսուակ . . . կամ . . .
5. Այն պատմութիւնն որ լսողները իւրեւը անոնց որտեւը իւրեւէ՝ կը կոչուի . . . կամ . . . պատմութիւն :

ԿԵ. ԵՇԵՐԸ ՔԱԼԵՑՆԵԼՈՒ ԸՆՏԻՐ ՄԻԶՈՑ ՄԸ

Նախագիծ . — 1. Պօղոս իւր իշուն վրայ հեծած է , բայց

 չի կրնար քալեցունել զայն :
 Յովհաննէս խորհուրդ կուտայ
 անոր որ մտրակին ծայրէն ըս-
 տեպղին մը կախէ : — 2. Եշն՝
 ստեպղինը խածնել չկրնալուն
 վրայ բարկանալով՝ վրայէն կը
 նետէ Պօղոսն եւ ընդեղէնը
 կ'ուտէ հանդարտօրէն (նկարա-
 գրեցէ՞ք) :

ԿԶ. — ԱԳԱԿԱՆԱԾ ՏՂԱՆ

Նախագիծ . — 1. Պօղոս՝ Պարոյրին հետ խաղալու համար
 հրաման կը խնդրէ իւր մօրմէն (տրամախօսութիւն) : Մայրը
 չի հաւանիր , վասնզի Պարոյր ապականած տղայ մ'է : Պօղոս՝
 որ « ապականած » բառին նշանակութիւնը չի գիտեր , կը
 հաղանդի սակայն : — 2. Երեկոյին՝ պարտէզին մէջ կը տես-
 նէ խաղողի երկու ողկոյզներ՝ որոնցմէ մին սկսած էր ապա-
 կանիլ (նկարագրեցէ՞ք) : — 3. Պօղոս կը յորդորէ իւր մայրն
 որ փրցունէ զայն . փաստեր մէջ կը բերէ : — 4. Մայրը կը
 բացատրէ թէ ապականած տղայ ըսելով ի՞նչ պէտք է հաս-
 կընալ : Մանուկները բաղդատել խաղողի ողկոյզներուն հետո

ԿԷ. — ՇՐՋԱԳԱՑՈՒԹԵՆՔ ՄԸ ԶՐԿՈՒՄ

Նախագիծ . — 1. Գիւղն ենք : Հօրեղբայր Նիկողոսն ե-
 կաւ քաղաքէն . տղայոց ուրախութիւնն (ինչո՞ւ համար) : —
 2. Հետեւեալ օրն հօրեղբայր Նիկողոս շրջագայութիւն մը
 կ'առաջարկէ (ո՞ւր) : — 3. Հրանոյշ՝ որ անհոգ աղջիկ մ'է ,
 չի կրնար գանել իւր գիսարկն իւր կոշիկները պա-
 տրուտած են — 4. Հօրեղբայր Նիկողոս չ'ուզեր միասին
 անիլ զանիկա : — 5. Հրանոյշ տունը կը մնայ . Բարոյական

Հ Յ Ա Հ Ա Ն Գ 53.

Ուսումն բառից. — Գոյականներ գտնել.

1. Երբ մէկէ աւելի անձանց միջև պայման է բռուէ որ միւնչըն բորշչեալ տեղ մը գտնուաւն, այն անձինք . . . մըրած կ'ըլլուն .
2. Յամաք երկրի մը մէջտեղը գտնուած ջուրի ընդարձակ տարածութիւնը . . . կը կոչուի :
3. Փոքրիկ ըն կ'ըսեն . . .
4. Երկու ծովեր իրարու հետ միացուազ ջուրի հետ անցը կը կոչուի . . .
5. Երկու ծովեր իրարմէ բաժնող ցամաքին կ'ըսեն . . .
6. Երբոր մէկն ինձի հետ կը մրցի և կը ջանայ ստանալ պյն մըցանակը զոր ես ալ կ'ուզեմ ունենալ, պյն անձն իմ . . . կը լինի :

ԿՐ. — ԿԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Նախագիծ. — 1. Հեղինէ որ կարգասէր աղջիկ մ'է, վարժարան երթալու պահուն դիւրութեամբ կը գտնէ իւր բոլոր բանները . . . : Լաւ շտկուած սենեակ . . . ճշգութիւն . . . — 2. Լեւոն՝ որ կարգասէր չէ, կը փնտոէ իւր գիրքերն, իւր գլխարկը (նկարագրեցէ՞ք), եւ կ'ուշանայ վարժարան երթալու . . . — 3. Եզրակացութիւն:

Ա. — ԱՂՅՈՒԹՊԱՆՆ ՈՒ ԱՇԽԱԴՈՒԾԸ

Նախագիծ. — 1. Սարզիս անուն աղօրեպանն եւ Վարդան անուն ածխագործը՝ չափազանց խմած ըլլալով զիւղ կը վերադառնան թեւ թեւի տուած (նկարագրեցէ՞ք). — 2. Աղօրեպանը սեփ սեւ եղած է, իսկ ածխագործը՝ ճեփ ճերմակ . . . : Գիւղացիք դուռներուն առջեւ նստած են . . . : — 3. Բարոյական:

Հ. — ՊՈՂՈՍԻ ԴԺՈՒԱՐԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Նախագիծ. — 1. Սեղանին վրայ՝ Պօղոս ամէն բան անախորժ կը գտնէ (ընդպայնեցէ՞ք) . . . — 2. Հօրեղբայրը՝ Ռուրէն՝ անոր այս թերութիւնն ուղղելու մտօք՝ զիւղը կը տանի եւ ութ օր հոն կը պահէ զայն . . . — 3. Պօղոս հետզհետէ կը մերժէ ոչխարի զիստը, շողգամն, հօրեղբայրն ազատ կը թողուզնա . . . (արամախօսութիւն), . . . — 4. Պօղոս անուշեղէններ կ'ուզէ . . . հօրեղբայրը կը մերժէ եւ հացի մնծկակ կտոր մը կուտայ որ ուտէ . . . — 5. Հետեւեալ օրը Պօղոս ամէն բանի հաւնիլ կ'ոկսի :

ՀԱ. — ՆԱՄԱԿ՝ ՈՐՈՎ. ԿԸ ԽՆԴՐԵՆՔ ՄԱՍ ՄԸ ԿԵՐՊԱՍ

Նախագիծ. — 1. Տեղ ու թուական : — 2. Զեր մօրն անունով կը դրէք վաճառականի մը , որպէսզի վեց րուպ (1) եւս դրկէ այն կերպասէն զոր գնած է ձեր մայրն — 3. Ստիպողական է (պատճառ մը հնարեցէք) : — 4. Կառապանը պիտի առնու կերպասն՝ արժէքը վճարելով : — 5. Յարգանաց բանաձեւ : — 6. Հասցէ :

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 54.

Հետեւեալ պարբերութիւններն ամբողջացուցէք :

1. Մոյրու ներեց եղբօրս , . . . (առօրդ. նիդ. որւշերնով):
2. . . . (առ. նիդ. որւշերնով) , պէտք է եւանդեամբ աշխատիլ :
3. . . . (առ. նիդ. բնեազ) , բայց չեկառ :
4. Անասունները մի՛ առնջէք , . . . (առ. նիդ. կամպեազ) .

ՃԲ. — ՊԱՐԱՊ ՀԱՅԿԸ

Նախագիծ. — 1. Երկրագործ մ'եւ իւր նորաաի որդին հասունցած արտի մը քովնի վեր կը շրջագայէին : — 2. Տղան (թող անձամբ խօսի) կը հիանայ գեղեցիկ հասկի մը վրայ որոյ գլուխը շիփշիտակ կեցած է : — 3. Հայրը նախամեծար կը համարի այն հասկերն որոց գլուխը ծուած է (ինչո՞ւ համար) : — . Այսպէս են նաեւ կարդ մը տղաքներ (ընդայնեցէք) : — 5. Տղուն որոշումը :

ՀԳ. — ՎԱՅԵԼԶԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Իրասզիտական հարցեր . — Այեր նազուստները

1. Մարի՛ամ , ինչո՞վ շինուած է շրջազգեստիդ կերպասն :
2. Ի՞նչ է բամպակը :
3. Բամպակը կենդանայի՞ն բերք է թէ բուսային :
4. Եղբօրդ պատմուճանն ի՞նչ կերպասէ շինուած է :

(1) Մէկ կանգաւան ութ բուռ է :

5. Բուրդն ուսկի՞ց կ'արտադրի :
 6. Բուրդն ի՞նչ կերպով կը վերածեն կերպասի :
 7. Բուրդը բուսային արտադրութիւն է թէ կննդանային :
 8. Թաշկինակդ ի՞նչ բանէ շինուած է :
 9. Վուշն ի՞նչ է :
 10. Ի՞նչ բանէ շինուած է այն ջնջոցն որով կը սրբենք գրատախտակն :
 11. Ի՞նչ է կանեփր :
 12. Վուշն ու կանեփր կենդանայի՞ն բերք են թէ բուսային :
 13. Վիզիդ վրայ ժապաւէն մ'ունիս. ինչէ՞ն շինուած է այն :
 14. Մետաքսն ուսկի՞ց առաջ կու գայ :
 15. Մետաքսը բուսայի՞ն արտադրութիւն է թէ կենդանային :
 16. Բամպակը, բուրդը, վուշը, կանեփրն ու մետաքսը կը կոչուին հետուելնի-ն , ի՞նչ կը նշանակէ այս բան :
 17. Այս բոլոր կերպամներուն մէջ ո՞րն է ամէնէն սուղն :
 18. Ո՞րն է ամէնէն աւելի տաք պահողը :
 19. Բրդեղէն կերպամներուն մէջ՝ ո՞րն է ամէնէն գիմացկունն :
 20. Ինչո՞վ կը շինուի ամենէն ընտիր ճերմակեղէնը , բամպակո՞վ թէ վուշով .
-

ՀՐԱՀԱՆԳ 55.

Ուսումն բառից . — Ածականներ գտնել :

1. Խոսքան ի՞նչ ուսումն մարդուն կ'ըսեն
 2. Այն աղան որ բնաւ հուրտու կենալ չե սիրեր՝ կը կոչուի . . .
 3. . . . և այն խօսքեր որոցմէ բան մը վ հուզուի :
 4. . . . է այն ժարագութիւնն որ ի հորո պիտի հանէ մեր կոյ :
 5. . . . է այն մարդն որպէս դրւէ և ւ-ընէ որոշում մ'ընելու :
 6. Արդար-սիրեա կամ ճշմարիս իւսանաց վրայ հիմնուած զահանգումի մը կ'ըսեն . . . կամ . . . զահանգում :
 7. . . . կըսեն այն մարդուն որ կարդալ գրել ուսումն վ :
 8. . . . է այն աղանն որ կը պարսկակէ շատ պեսակ ուստելիքներ :
 9. Այն հիւանդութիւնն որ չե կնար բռժժուի՝ կը կոչուի
 10. . . . է այն աղան որպէս թերութիւնք չեն կրնար ուզգուիլ
-

ՀԵ. — ԵՓԱՆ ԶՈՒԿԵՐԸ

Նախագիծ . — 1. Փոքրիկն Յակոբ մեծ խնամք կը տանի իւր կարմիր ձուկերուն . . . — 2. Զմրան առաւօտ մը՝ բղղուկին մէջ տաք ջուր կը լսցունէ , որպէս զի ձուկերը չը մոխն : — 3. Զուկերուն մահը (նկարագրեցէք) : — 4. Ուրիշ տնդամ Յակոբ խորհուրդ պիտի հարցնէ .



ՀԵ. — ԿԵՂԾ ԱՌԱՏԱԶԵՌՈՒԹԻՒՆ

Յակոբ՝ մէկու մը բան չհրցուցած՝ քիչ մ'եւ . իւր կարկանդակին մաս մը կը հրամցուածած ջուր կը լւնէ իւր Մարիամ անուն մեծ քրոջ , որ ցունէ իւր ձուկեր կը մերժէ՝ չնորհակալութիւն յայտնելով . . . բան վրայ :

— 1. Կուսիան՝ այս մերժումէն գոհ մնալով մի եւ նոյն նուերը կ'ընէ իւր փոքրիկ քրոջ՝ Մաննիկին , որ կ'ընդունի : — 3. Լուսիան ուրիշ բան կը յուսար . . . — 4. Սրտանց պէտք է ընել նուերը :


ՀԶ. — ԳԵՐ ԱՆԳԼԻԱՑԻՆ ԵՒ ԿԱՐՃԱՀԱՍԱԿ ԿԱՍԴՈՆԻԱՑԻՆ

Նախագիծ . — 1. Լոնտրայի մէջ , լաւ ճայէ մը յետոյ , անգլիացի բարձրահասակ ու գէր լորտ մը՝ կը ծաղրէ կարճահասակ ու նիհար կասդոնիացի մը : — 2. Կասդոնիացին 50 լիրա գրաւ զնելով՝ յանձն կ'առնու որ երեք անդամ պիտի դաննայ Հայտ-Բարքի (1) շուրջն՝ Անգլիացին շալակն առած : Այս վերջինն ալ կը յայտնէ իւր հաւանութիւնն : — 3. Հետեւեալ օրը՝ կասդոնիացին կ'ըսէ թէ ինք գրաւ գրած է որ Անգլիացին միայն պիտի առնու շալակն , ոչ թէ անոր զգեստները (տրամախօսութիւն) : Անգլիացին կը չփոթի : — 4. Վը կաները կը վճռեն թէ կասդոնիացին շահած է գրաւն :

(1) Բարձր դասու անձանց յատուկ մեծ պտուտակալսոր է Լոնտրա .

Վ Բ Ի Պ Ա Կ Ք

ԵԶ	ՊԵԱԼ	ՈՒՂԻՂ
Է	անխամ	անխնամ
Ը	Վ. Ֆ.	Վ. Ֆ.
ԺԱ , ԺԲ	աղորեպան	աղօրեպան
ԺԲ , 14	աղորեք	աղօրիք





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220035252

11
35252

ի Պատուարժան Ռւսումնական Խորհրդոյ Ազգային
Կեղրոնական Վարչութեան

ԴՐ 4.

1. ՀՆԹԱՑՔ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՅԵԼԶԱ-
ԽՕՍՈՒԹԵԱՆ, Ա. տարի, ի պէտք ուստանողաց. դին 3.

2. ԲԱՆԱՀԻ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՅԵԼԶԱ-
ԽՕՍՈՒԹԵԱՆ, Ա. տարի, ի պէտք ուստացչաց. 4.

3. ԳՈՐԾՆԱԿ. ԸՆԹԱՑՔ ՕՍՄ. ԼԵԶՈՒԻ. - Ման
Ա. ԱՌԱՋՆՈՐԴ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ (ՀՅԱՆ ՀՅԱՆ).

Սոյն թուրքերեն նոր հերականն եւ ընթերցարանք
միծ դիւրութեամբ կ'ուսուցանէ Օսմ. լեզուի ընթեր-
ցումն, ուղղագրութիւնն եւ քերականական դիտե-
մքներ որք անհրաժեշտ են ուղիղ արտասանութեան
համար.

2 20

Սոյն դաստիքոց Կեղրոնատ դին է Թիւ 4, Օսմ. Գրա-
տուն, Կամուրջին գլուխ, Միամալու, Կը գանուին նաեւ
բոլոր հայ գրավաճառաց քով :

Դպրոցաց համար յոյժ գոհացուցիչ զեղչ :

ՀՆԹԱՑՔ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՅԵԼԶԱԽՕՍՈՒԹԵԱՆ
անուն դաստիքին յաջորդ մասերն՝ որք բարձրագոյն գա-
սարանաց սահմաննեալ են, լոյս կը տեսնեն ընդհուպ :